



ԱՅՏՆՏՆԱԿԱՆ
ՏՆՏԵՍԱԳԵՏԱԿԱՆ
ՎԱՆԱԿԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԲԼՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ

Ծրագրի գիտական ղեկավար՝

տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ա. Գևորգյան

Կատարողներ՝

քիմ.գ.թ., դոցենտ Ռ.Ա. Պետրոսյան

տ.գ.թ., դոցենտ Ա.Պ. Գևորգյան

7/001

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ
ԲԼՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ
ՈՐՈՇՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ
ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

2012-2013 թթ. ՆԵՐՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

**«ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
2014**

ՀՏԴ 504.05706:330(479.25)

ԳՄԴ 20.1+65.9(2Հ)

Գ 479

**Երաշխավորվել է հրատարակության
ՀՊՏՀ գիտական խորհրդի կողմից**

Գևորգյան Ս.Ա.

Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության

Գ 479 **կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում/ Ծրագրի գիտական ղեկավար՝**
Ս.Ա.Գևորգյան; **Կատարողներ՝** Ռ.Ա. Պետրոսյան, Ա.Պ. Գևորգյան.- Եր.: Տնտեսագետ
հրատարակչություն, 2014.-60 էջ:

ՀՏԴ 504.05706:330(479.25)

ԳՄԴ 20.1+65.9(2Հ)

ISBN 978-9939-61-070-2

© Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի
«Տնտեսագետ» հրատարակչություն, 2014

Ներածություն

Համաշխարհային հանրության զարգացման արդի էկոլոգատնտեսական նկարագիրը ունի մի շարք առանձնահատկություններ, որոնցից ռազմավարական առումով առավել նշանակալի են ռեսուրսապահովվածության, կյանքի և շրջակա միջավայրի որակի բարելավման հիմնախնդիրները: Այդ տեսանկյունից բնապահպանության և բնօգտագործման **կարևորագույն սկզբունք է դառնում զարգացման էկոլոգիական և տնտեսական շահերի գիտականորեն հիմնավորված զուգակցումը:** Դա նշանակում է, որ կայուն զարգացման ճանապարհին ցանկացած պետության նախաձեռնությունները պետք է ներդաշնակ լինեն այն հարցերի լուծման գաղափարախոսությանը, որոնք վերաբերում են **շրջակա միջավայրի որակի պահպանմանը, առաջնային բնառեսուրսային ներուժի կայունության ապահովմանը, էկոլոգիական անվտանգության հաղթահարմանը և հասարակական բարեկեցության/կյանքի որակի ցանկալի մակարդակի նվաճմանը:**

Վերը նշված պահանջների իրականացումը առանձնահատուկ նշանակություն ունի **Հայաստանի** համար, որտեղ զարգացման և արագընթաց տնտեսական աճի, հասարակական բարեկեցության բարելավման որոշակի դրական միտումները, ցավոք, համարժեք չափով չանդրադարձան շրջակա միջավայրի որակի և բնառեսուրսային ներուժի կայունության պահպանման վրա: Ելնելով դրանից՝ առավել կարևորվեց մարդու տնտեսական գործունեության ազդեցության հետևանքով շրջակա միջավայրի բացասական **փոփոխությունների/վնասների կանխման խնդիրը**, և այստեղ որոշակի դերակատարություն ունի բնապահպանական ու բնօգտագործման վճարների համակարգի տնտեսական գործիքների կիրառումը:

Գիտական գրականությունում բազմաթիվ են ուսումնասիրությունները՝ նվիրված էկոլոգատնտեսական վնասների գնահատմանը: Սակայն գնահատման ցուցանիշների ընտրությունը ոչ բոլոր դեպքերում է ծառայում առաջադրված խնդիրներին: Դրա պատճառը գնահատման միասնական մեթոդաբանության բացակայությունն է: Բացի այդ, ՀՀ-ում բնօգտագործման և բնապահպանական վճարների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության գործող համակարգերը հնարավորություն չեն տալիս ամբողջությամբ փոխհատուցելու էկոլոգատնտեսական վնասի մեծությունը: Դա, իր հերթին, պայմանավորված է վճարների դրույքաչափերի որոշման մեթոդաբանության անկատարությամբ: Հետևաբար՝ այդ հիմնախնդիրների գիտական կարգավորումը և լուծումը ժամանակի հրամայականն են և պահանջում են համալիր ուսումնասիրությունների իրականացում: Ենթադրվում է, որ միայն այս դեպքում հնարավոր է հարթել զարգացման բարդ ճանապարհը, որը տանում է դեպի «կանաչ» **էկոնոմիկայի նպատակների գործնական իրականացում:**

Հետազոտման հիմնական նպատակն է ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգը, դրանում կիրառվող վճարների որոշման մեթոդաբանությունը, վեր հանել ոլորտին բնորոշ հիմնախնդիրները և, համեմատելով առաջատար միջազգային փորձի հետ, որոշել կատարելագործման ուղիները: Այս համատեքստում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

1. բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգի ներքին կառուցվածքի ուսումնասիրում, ազգային և միջազգային փորձի համեմատական վերլուծություն և գնահատում,

2. բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման ժամանակակից մեթոդաբանության ձևավորման և կիրառման արդյունավետության ուսումնասիրում,

3. ոլորտի հրատապ լուծում պահանջող հիմնախնդիրների վերհանում, դրա հիման վրա՝ առաջատար միջազգային փորձի տեղայնացման հնարավորությունների որոշում և զարգացման հեռանկարների հիմնավորում,

4. բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման և միասնական մեթոդական մոտեցումների մշակման հիմնավորում,

5. բուհական կրթական համակարգի համար բնապահպանական և բնօգտագործման վճարներին վերաբերող ուսումնամեթոդական ձեռնարկի կամ մեթոդական ցուցումների մշակում և հրատարակում:

Հետազոտման առարկան և օբյեկտը: Առարկան Հայաստանի Հանրապետության բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանությունն է:

Հետազոտման **օբյեկտն են** ՀՀ բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգը և դրա ներքին կառուցվածքը, տնտեսության զարգացումը և շրջակա միջավայրի որակի պահպանումը:

Հետազոտության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը:

Առաջադրված խնդիրների լուծման համար տեսական հիմք են ՀՀ բնապահպանական քաղաքականությունը, օրենսդրությունը և նորմատիվամեթոդական և իրավական փաստաթղթերը, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման միջազգային առաջատար մեթոդաբանությունը և կոնվենցիաները, հայրենական և արտասահմանյան տնտեսագետների և բնապահպանների ուսումնասիրությունները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են համակարգային համեմատական վերլուծությունների, խմբավորումների և գրաֆիկական պատկերման, էկոլոգատնտեսական գնահատման և տեղեկատվության հավաքագրման ու մշակման մեթոդներ:

Աշխատանքի համար տեղեկատվական հիմք են հանդիսացել Ազգային վիճակագրական ծառայության տվյալները, ՀՀ բնապահպանության նախարարության և գերատեսչությունների էկոլոգիային վերաբերող զեկույցները, տարեկան հաշվետվությունները և տվյալների բազաները/ բանկերը, ինչպես նաև միջազգային տարբեր պարբերականների գիտական ուսումնասիրությունների արդյունքները և փորձագիտական գնահատումները, ժամանակակից այլ գիտամեթոդական նյութեր:

Հետազոտության արդյունքների գործնական նշանակությունը: Հետազոտության շրջանակներում իրականացված գիտական ուսումնասիրությունների և վերլուծությունների հիմնական արդյունքներն ու առաջարկությունները կարող են օգտագործվել շրջակա միջավայրի որակի բարելավման կառավարման/հսկողության և էկոլոգիական անվտանգության ապահովման, ազգային բնապահպանական փորձաքննության ու տեսչական ծառայությունների համակարգում, ինչպես նաև դրանց գիտակրթական ապահովման համար:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հիմնական դրույթները և արդյունքները նախատեսված են փորձարկել մարզային բնապահպանական տեսչական ծառայություններում: Կքննարկվի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման ամբողջական մատրիցայի ստեղծման մեթոդաբանական առաջարկը բնապահպանական վնասների, ռիսկի և վտանգների տվյալների հավաքագրման և դրանց թափանցիկության ու մատչելիության ապահովման տեսանկյունից:

1. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ, ԿԻՐԱՌՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1. Իրավիճակային վերլուծություն, միջազգային փորձի գնահատում

Բնապահպանությունը և բնօգտագործումը, լինելով շրջակա միջավայրի պահպանության ամբողջական համակարգի կարևոր բաղադրիչներ, փոխկապակցված են էկոլոգիական հիմունքներով, ինչն ավելի ընկալելի/ընդունելի են դարձնում դրանց դիտարկումը և սահմանումը տնտեսական մեխանիզմի միասնական համատեքստում:

Այսպես՝ **տնտեսական մեխանիզմը** շրջակա միջավայրի, դրա բնական ռեսուրսների պահպանության, վերարտադրության և բանական/ռացիոնալ օգտագործման կառավարման (կազմակերպման և կարգավորման) ձևերի և մեթոդների համակարգ է՝ ուղղված հասարակական արտադրության տնտեսական և էկոլոգիական շահերի համատեղելիությանը: Բնօգտագործողի տեսանկյունից, այդ մեխանիզմի կիրառումը կողմնորոշված է նյութական շահագրգռվածության միջոցով շրջակա բնական միջավայրի հետ դրա ներգործության օպտիմալացմանը: Ավելի ընդհանուր կերպով **շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմը** կարելի է սահմանել որպես խրախուսական և հարկադրական բնույթի **տնտեսական գործիքների համակարգ**, որոնց օգտագործումը բնության պահպանության կառավարման ոլորտում ապահովում է էկոլոգիական քաղաքականության նպատակների հաղթահարում: Ուշագրավ է այն փաստը, որ գիտական գրականության մեջ, ինչպես նաև պաշտոնական պետական փաստաթղթերում գրեթե եզակի են շեշտադրումները **«օգտագործողը վճարում է»** սկզբունքի վրա: Ավելի հաճախ փորձ է արվում դիտել այն զուտ բնապահպանական տեսանկյունից, այսինքն՝ **«աղտոտողը վճարում է»** սկզբունքի կիրառման միջոցով, ինչը, մեր կարծիքով, մեթոդական բացթողում և աղավաղում է: Այնուամենայնիվ, կատարված ուսումնասիրությունները անհրաժեշտ նախադրյալներ ստեղծեցին բնապահպանության քաղաքականության տնտեսական գործիքների դասակարգման և ներքին կառուցվածքի վերլուծության ու գնահատման համար: Ուսումնասիրություններում հիմնական շեշտադրումը կատարված է **Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի**, ինչպես նաև **ԱԵԿԿԱ-ի** երկրների փորձի վերլուծության և գնահատման վրա, քանի որ հենց այդ երկրներից են ավելի հաճախ բխում բնապահպանական քաղաքականության կատարելագործման և ռազմավարությունների մշակման միջազգային նախաձեռնությունները^{1,2}: Անտեսված չէ նաև **ԱՄՆ-ի, Ճապոնիայի, Կանադայի** և զարգացած այլ երկրների փորձը:

Ինչպես հայտնի է, բնապահպանական գործունեության խրախուսման գործոնի արդիականացումը սկսվեց շուկայական տնտեսության անցման պահից: Դրա կարևորությունն ակնհայտ էր, քանի որ տնտեսական զարգացման նոր պայմաններում պետությունն այլևս դադարում է լինել կառավարման միակ սուբյեկտը: Հակառակը, տնտեսավարման տարբեր սուբյեկտների և ձեռնարկատիրական գործունեության զարգացման հնարավորությունների ընդլայնումը ստեղծեց նոր նախադրյալներ բնապահպանության և բնօգտագործման արդյունավետ տնտեսական մեխանիզմի մշակման և կատարելագործման համար: Միաժամանակ, մեթոդական մշակումները հաստատեցին գիտական այն դրույթը, որ **տնտեսության շուկայական մոդելի փոխում բնապահպանական և բնօգտագործման տնտեսական մեխանիզմի գլխավոր տարրը գնային կամ հարկային(կամ համատեղ) կարգավորումն է**: Գնային կարգավորման գործիքները պայմանականորեն բաժանված են երեք տեսակների՝ **խրախուսման, հարկադրական և հատուցման**:

¹ Справочник по экономическим инструментам для осуществления политики в области окружающей среды в Центральной и Восточной Европе //под ред. Клара И., Мак Николаса Дж., Клаус Е., М., Сентедре, Венгрия 1999, 116 с.

² Экономические инструменты для контроля за загрязнением окружающей среды и для рационального использования природных ресурсов в странах членах ОЭСР. OECD. 1997, 135 с.

Այս համատեքստում որոշակի հետաքրքրություն է ներկայացնում Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում բնապահպանության և բնօգտագործման քաղաքականության՝ ներկայումս օգտագործվող տնտեսական գործիքների վերլուծությունը և գնահատումը:

Ուսումնասիրության հիմնական արդյունքների վերլուծությունից հետևում է, որ, կապված իրականացվող բնապահպանական քաղաքականության հետ, տնտեսական գործիքները մի շարք երկրներում ունեն որոշակի ընդհանրություններ հատկապես արտանետումների, արտահոսքերի և թափոնների տեղադրման, օգտահանման, ինչպես նաև այդ գործողությունների նորմերի չպահպանման վճարների մասով: Պետք է նշել, որ **ՏՀԶԿ-ի** գրեթե բոլոր երկրներում օգտագործվում են էկոլոգիական վճարները (բացառությամբ՝ **Կանադայի և Մեծ Բրիտանիայի**): Բացի դրանից, այդ երկրների մեծամասնությունը նախապատվությունը տալիս է **«գրավ-վերադարձային»** համակարգին, իսկ **էկոլոգիական փոխառությունները** ներդրված են միայն **Ավստրալիայում, ԱՄՆ-ում և Կանադայի** երեք նահանգներում: Միաժամանակ, խրախուսելի է այն փաստը, որ **Կանադայում (Քվեբեկ), Դանիայում, Ֆինլանդիայում, Գերմանիայում, Ճապոնիայում, Շվեդիայում, Թուրքիայում և ԱՄՆ-ում ներդրված է վնասների հատուցման տնտեսական մեխանիզմը**: Դրա կարևորությունն առավել նշանակալի է զարգացող երկրների, այդ թվում՝ նաև **Հայաստանի համար, որտեղ դեռևս պահպանվում են խոր հակասություններ բնապահպանական վճարների սահմանման, նպատակային օգտահանման, հարկային բեռի և վնասների հատուցման միջև**: Ենթադրվում է, որ այստեղ հիմնական պատճառը գործող օրենսդրության, շրջակա միջավայրի կառավարման մեխանիզմի և տնտեսական մեխանիզմի անկատարությունն է:

Վճարների խրախուսման էֆեկտն առավել հեռանկարային (բացի ավանդականներից) կարող է դառնալ թափոնների օգտահանման մասով, ինչի համար պետք է գործեն հատուկ մշակված կարգեր և օրենսդրական ակտեր: Տնտեսական այս գործիքի կիրառման անհրաժեշտությունը բավականին արդիական է հատկապես Հայաստանում: Խոսքը **երկրորդային ռեսուրսաօգտագործման**

մասին է, որի կարևորությունն ամրագրված է «Թափոնների մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի 21-23 հոդվածներով: Սակայն, գործնական կիրառման արդյունավետության տեսանկյունից, այդ հիմնախնդիրը չի ապահովում ցանկալի տնտեսական և բնապահպանական արդյունք՝ հատկապես ընդերքօգտագործման, արդյունաբերական և ԿԿԹ-ների վերամշակման և օգտագործման մասով: Միաժամանակ, էկոլոգիապես արդարացված է այն քայլը, համաձայն որի՝ ՀՀ-ում սահմանված են վճարներ ոչ էկոլոգիական արտադրանքի թողարկման և թափոնագոյացման համար: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում նման մեխանիզմը գործում է սակավաթիվ երկրներում (**Էստոնիա, Հունգարիա, Լատվիա, Չեխիա, Սլովակիա**):

Ուշագրավ է նաև այն փաստը, որ ոչ էկոլոգիական արտադրանքի համար վճարներն առավել տարածված են **Հունգարիայում**, որտեղ, ի դեպ, չեն գործում արտանետման վճարները: Այդ շարքի վճարները կարող են կապված լինել որոշակի էկոլոգիական հիմնախնդիրների, օրինակ՝ ԿԿԹ-ների ծավալի աճի հետ, ինչն առավելագույնը բնորոշ է, օրինակ, Հայաստանին: Այդ վնասները, ըստ եվրոպական փորձի, հիմնականում ուղղված են նպատակային էկոլոգիական ֆոնդերին, որոնք լայն տարածում են ստացել **Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում**: Առանձնահատկությունն այն է, որ բնապահպանական վճարների ձևավորման «մեկնարկային» փուլում (1998-2000 թթ.) հիմնական շեշտադրումը մեծ թվով աղտոտող նյութերի (100-150 անվանում) վճարների սահմանման վրա է, այն դեպքում, երբ **Սլովենիայում**, օրինակ, հարկերը սահմանված են միայն մեկ աղտոտիչ նյութի՝ CO₂ համար: Նշենք, որ **«թույլտվություն – արտանետումների վճարներ – նորմատիվների չպահպանման» համակարգը** գործում է **Չեխիայում, Էստոնիայում, Լատվիայում, Լիտվայում, Լեհաստանում, Սլովակիայում** և կողմնորոշված է մթնոլորտային օդի, ջրի, թափոնների հավաքման ու օգտահանման հսկողության ուժեղացմանը: Նորմատիվների չպահպանման վճարները լայն տարածում են ստացել Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում, որոնց նպատակը ստանդարտների և նորմատիվների խախտումների սահմանափակումն է:

Վճարների և տուգանքների կիրառման նախնական փորձը ցույց տվեց, որ դրանց մեծությունները զգալիորեն զիջում են ծախսերին, հատկապես պատճառված վնասների չափով, ինչը գրեթե դուրս է մնացել հսկողությունից: Այստեղից էլ՝ **վճարների դրույքաչափերի վերանայման «Ֆենոմենը»**, որ, արդիականացնելով հարկերից ազատման գաղափարը, հետագայում դարձավ վճարների դրույքաչափերի վերանայման դրդապատճառ: Ցավոք, դա դեռևս չի ապահովում սպասվելիք բնապահպանական արդյունք: Դիֆերենցված հարկերը, իրենց հերթին, խրախուսում էին չէթիլացված բենզինի օգտագործումը:

Այս հիմնախնդիրների գործնական լուծումը ներկայիս պայմաններում դժվար է, քանի որ **անհրաժեշտ է մշակել շրջակա միջավայրի որակի պահպանման ժամանակակից իրավիճակին համահունչ նոր նորմատիվներ**՝ ապահովելով դրանց կատարման հսկողությունը, գործարքների կազմակերպման կառույցների ստեղծումը, էկոլոգիական աուդիտի ներդրումը և զարգացումը: Աղյուսակ 2-ում ամփոփված են բնօգտագործման կարգավորման հիմնական տնտեսական գործիքները, որոնք որոշ չափով համալրված են նոր տեսակներով: Դա առաջին արձագանքն է տնտեսական մեխանիզմի կատարելագործման անհրաժեշտության (հետմեկնարկային փուլ):

Այս հանգամանքն առավել նշանակալի է զարգացող երկրների, օրինակ, Հայաստանի համար, որտեղ հարկային քաղաքականությունը ինչ-որ չափով «հակադրված» է գնային քաղաքականությանը, հատկապես հանքահումքային համալիրի ճյուղերում (մասնավորապես՝ երկրորդային ռեսուրսաօգտագործումն ընդերքօգտագործման ոլորտում): Բացի դրանից, Հայաստանում ընդհանրապես չի գործում էկոլոգիական ապահովագրության համակարգը, սուբսիդիաները (գրանտներ, արտոնյալ հարկեր, «փափուկ» դրամական վարկեր և այլն) տատանողական արդյունավետության բնույթի են, բացակայում են շուկայական գործիքները՝ հատուցման քաղաքականությունը (վնասների մասով, բաբլ սկզբունքը, արտանետման քվոտաների վաճառք և այլն):

Մասնագետների կարծիքով՝ բնօգտագործման կարգավորման տնտեսական մեթոդները զարգացած շուկայական և անցումային տնտեսությամբ երկրներում ունեն շրջափելի ընդհանրություններ,

բացառությամբ՝ «**զուտ շուկայական լծակների**» օգտագործման առավելությունների: Ավելին, էկոլոգիական վճարները, որոնք կիրառվում են նորանկախ պետություններում, օրինակ՝ **Ռուսաստանում, Բելառուսում, Ուկրաինայում**, ավելի ընդլայնված և տարածված են, սակայն օգտագործման արդյունավետության վրա հաճախ բացասաբար է անդրադառնում սոցիալ-տնտեսական անկայունությունը:

Իրավիճակը հատուկ է նաև Հայաստանին: Ուստի վարչարարական մեթոդները կարող են շրջագծել տնտեսական մեխանիզմների օգտագործման բնագավառը, իսկ բնապահպանական վճարների արդյունավետ կիրառումը/ներդրումն էապես կախված է պետական ստանդարտների/նորմատիվների ընթացակարգի առկայությունից: Ներկա պայմաններում այդ համակարգը կատարելագործման կարիք ունի նաև Հայաստանում:

1.2. Բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգը

Հայաստանում գործող վճարների համակարգի հիմքում «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքն է, որն ուժի մեջ մտավ 1999 թ. հունվարի 1-ին³: Օրենքը համալրվեց ՀՀ Կառավարության երկու որոշումներով, և արդյունքում ձևավորվեց վճարների միասնական համակարգ, որը հիմնված է հետևյալ տնտեսական մեխանիզմի և գործիքների կիրառման վրա՝

1. Բնապահպանական վճարների մեխանիզմ («աղտոտողը վճարում է» սկզբունք)

- մթնոլորտային արտանետումների վճարներ (շարժական և ամրակայված աղբյուրների համար),
- ջրային ավազան վնասակար նյութերի արտահոսքի համար սահմանված վճարներ,
- թափոնների (արտադրական, սպառման և կենցաղային) տեղադրման համար սահմանված հարկեր,

³ 2003-2005 թթ. նախարարական զեկույց, Երևան 2006, էջ 10-19, 2007-2011 թթ. նախարարական զեկույց, Երևան 2012, էջ 10-21, Գրիգորյան Է., Բնապահպանական և բնօգտագործման վճարների իրավական ակտերի ժողովածու, Երևան 2011, 96 էջ:

- Էկոլոգիապես վնասակար արտադրանքի համար սահմանված վճարներ,
- շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների արտադրության և ներմուծման վճարներ:

2. Բնօգտագործման վճարների մեխանիզմ («օգտագործողը վճարում է» սկզբունք)

- ջրօգտագործման վճարներ,
- օգտակար հանածոների արդյունահանված և մարված պաշարների համար սահմանված վճարներ,
- կենսապաշարների օգտագործման վճարներ:

Դրանք պարտադիր վճարներ են, որոնք կուտակվում են պետական բյուջեում և նախատեսված են բնապահպանական միջոցառումների իրականացման համար՝ որպես եկամուտների ստացման գործիքներ: Այստեղ տեղին է անդրադառնալ ՀՀ-ում արտադրվող և իրացվող, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար սահմանված վճարների ձևավորման տնտեսական մեխանիզմին և գործիքներին: Մեր կարծիքով՝ նման ապրանքների դասակարգումը **ունի մի շարք սկզբունքային անճշտություններ**: Օրինակ՝ ապրանքների ներքին կառուցվածքում առանձնացված են.

- պոլիէթիլենային իրեր, հազ. տ,
- պոլիէթիլենային իրեր, տ,
- դոյլ, հատ (դոյլը ևս կարող է լինել պլաստմասսայե):

Դասակարգումն անհրաժեշտ է վերանայել, քանի առկա է «պոլիէթիլենային նյութ – պլաստմասսա» հասկացությունների ոչ ճիշտ ընկալում: Ավելին, դրանցից յուրաքանչյուրը կարող է ընդգրկել տարբեր անվանմամբ և վտանգի աստիճանի հավելանյութեր: Այդ դեպքում **անհասկանալի է մնում վճարների դրույքաչափերի ձևավորման մեթոդական մոտեցումը**: Նույն մոտեցումը կիրառվում է ներկերի և յուղերի նկատմամբ: Ընդհանուր առմամբ, առանձնացված են 16 տեսակի ապրանքներ (լամպեր, կապարե կցորդիչներ, ազբոշիֆեր, գետերգենար, անտիֆրիզ և այլն)⁴:

⁴ ՀՀ ԱՎԾ: Շրջակա միջավայրը և բնական պաշարները Հայաստանի Հանրապետությունում, 2002 թ., էջ 59-60:

Դժվար չէ նկատել, որ Հայաստանում գործող բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգը սկզբունքորեն չի տարբերվում վճարների ձևավորման եվրոպական մոդելից: Տարբեր են եկամուտների նպատակային/հասցեագրման քաղաքական մոտեցումները, հատկապես համակարգի ձևավորման մեկնարկային փուլում, երբ Հայաստանում, ի տարբերություն ԱԵԿԿԱ այլ երկրների, չէին գործում նպատակային բնապահպանական (արտաբյուջետային) ֆոնդեր: Բացի այդ, օրենքն **անհրաժեշտ չափով չէր արդիականացրել վճարների խրախուսման կողմը: Ավելին՝ նախատեսված չէ նաև վճարների պարբերական շտկումը ինֆլյացիայի գործոնի հաշվառմամբ՝ բացառությամբ արտադրանքի համար սահմանված վճարների, որոնք ամրագրված են և ինֆլյացիայի դեպքում ավտոմատ կերպով շտկվում են**: Բնապահպանական վճարների դրույքաչափերը հաստատվում են օրենքով: Աղտոտման վճարների դրույքաչափերը սահմանային թույլատրելի արտանետումների/արտահոսքերի գերազանցման դեպքում եռապատկվում են: Օրենքով սահմանված են նաև խախտումների հետ կապված պատժամիջոցների կիրառման կանոններ:

Ինստիտուցիոնալ հիմքերի ձևավորման տեսանկյունից պետք է նշել, որ տնտեսական գործիքները մշակում է ՀՀ բնապահպանության նախարարությունը, իսկ համակարգի տեսչությունները հսկում են աղտոտման ու բնական ռեսուրսների օգտագործման փաստացի ծավալները: Վճարների դրույքաչափերն առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարությունը և հետագայում բաշխում հավաքագրված մուտքերը: Որոշակի դերակատարություն ունեն նաև ՀՀ ներքին գործերի նախարարությունը և պետական մաքսային ծառայությունը⁵: Առաջինը ՀՀ-ում գրանցված տրանսպորտային միջոցներից աղտոտման վճարների գանձման, իսկ երկրորդը՝ տրանզիտային աղտոտման վճարների մասով: Մաքսային ծառայությունը մուտքագրում է նաև էկոլոգիապես վտանգավոր ներմուծվող արտադրանքի համար սահմանված վճարները, իսկ երկրի ներսում թողարկվող նմանատիպ արտադրանքի վճարները մուտքագրում է պետական եկամուտների կոմիտեն: Վերջինիս և ՀՀ

⁵ Природоохранные платежи за загрязнение и продукцию. Оценка хода реформ и направления дальнейшего совершенствования. OECD. Ереван 2004, 51 с.

բնապահպանության նախարարության միջև են սահմանազատված վճարների գանձված հսկողության գործառույթները: Վճարների բաշխման սկզբունքները մնում են ոչ թափանցիկ:

Ուսումնասիրություններից պարզվեց, որ վճարների ազգային համակարգը չընդհատվող բարեփոխումների ընթացքում է: Չժխտելով տնտեսական մեխանիզմի բարելավման որոշ դրական միտումներ, այնուամենայնիվ, դեռևս ցածր է իրականացվող նախաձեռնությունների արդյունավետությունը, քանի որ **պահպանվում է անհամամասնությունը սահմանված վճարների դրույքաչափերի և փաստացի վնասների հատուցման ծավալների միջև:** Անհրաժեշտ է նաև վերանայել թափոնների համար սահմանված դրույքաչափերը, մասնավորապես՝ ոչ վտանգավոր թափոնների մասով: Հստակեցման և վերանայման կարիք ունեն վճարումների դրույքաչափերի որոշման նորմատիվները, ինչը, մեր կարծիքով, դրական ազդեցություն կունենա հատկապես բնապահպանական և բնօգտագործման մեթոդաբանության կատարելագործման և կիրառման արդյունավետության բարձրացման վրա:

Հուսադրող են պետական նախաձեռնությունները՝ ուղղված բնապահպանական նոր ֆոնդերի ստեղծմանը, մասնավորապես՝ Սևանա լճի վերականգնման, պահպանման և զարգացման հիմնադրամը, որը ստեղծվել է ՀՀ Կառավարության 2011 թ. ապրիլի 28-ի № 517-Ն որոշմամբ: Մեր կարծիքով, ինչպես այս հիմնադրամի, այնպես էլ 2005-ին ստեղծված շրջակա միջավայրի պահպանության «Դրամագլխի» և «Բնապահպանական նպատակային ֆոնդի» գործունեությունը պետք է լինի թափանցիկ, իսկ տեղեկատվությունը դրա մասին՝ մատչելի հասարակությանը⁶: Չափազանց կարևոր է նաև ֆոնդերի ձևավորման մեխանիզմների ընտրությունը, որով հնարավոր է նպաստել ֆինանսական միջոցների ներհոսքի աճի և ձեռնարկությունների բնապահպանական գործունեության մասնակի ինքնաֆինանսավորման վրա՝ ի հաշիվ աղտոտման բնապահպանական վճարումների:

⁶ 2007-2011. նախարարական զեկույց: Երևան.-2012.- էջ 12-23:

2. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

2.1. Մեթոդաբանության ձևավորման առանձնահատկությունները

Բնապահպանական և բնօգտագործման վճարների ներքին կառուցվածքի և կիրառման արդյունավետության ուսումնասիրությունը ցույց տվեց, որ դրանց **ձևավորման կարևոր օղակն են վճարովիության համակարգը և այդ համակարգի բաղադրիչների մեծության գնահատման մեթոդաբանությունը:** Վերջինիս գիտական հիմնավորվածության աստիճանի բարձրացումը, գնահատման ցուցանիշների ճիշտ ընտրությունը, նորմատիվամեթոդական ապահովումը շարունակում են մնալ բնապահպանական և բնօգտագործման տնտեսական մեխանիզմների կատարելագործման օրակարգում: Չի կորցնում իր արդիականությունը նաև այն թեզը, որ վճարների նման համակարգի գրագետ կիրառման դեպքում հնարավոր կլինի, բացի էկոլոգիական վճարների խրախուսող և ֆինսկալ գործառույթներից, ապահովել/երաշխավորել նաև մի շարք այլ էկոլոգատնտեսական խնդիրների լուծում:

Բնականաբար, նշյալ խնդիրների լուծումը ենթադրում է ձեռնարկությունների, իշխանության և կառավարման մարմինների, ֆինանսավարկային համակարգերի, պետական և տեղական բյուջեների միջև հարաբերությունների կազմակերպման դեպքում բնապահպանության և բնօգտագործման գործընթացի էկոլոգատնտեսական առանձնահատկությունների հաշվառում: Այս տեսանկյունից ևս կարևոր դերակատարություն ունեն բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգի ձևավորման մեթոդաբանությունը և տնտեսական գործիքների նորացումը:

Մասնագետներն այն կարծիքին են, որ բնական ռեսուրսների համար սահմանված վճարները պետք է ներառեն բնական օբյեկտների **օգտագործման իրավունքի**, այդ ռեսուրսների **շահագործման (սպառման)** վճարները:

Մեթոդաբանական այս մոտեցմամբ՝ բնական ռեսուրսների օգտագործման իրավունքի ձեռքբերման վճարը հնարավորություն է տալիս կարգավորելու տարածքի բաշխումը բնօգտագործման «մրցակցող» տեսակների միջև: Վճարի այս տեսակը մշտական բյուջետային մուտքերի ձևավորման հիմքն է՝ կապված բնական ռեսուրսների հատուցողական օգտագործման հետ: Այն բնօգտագործողների կողմից պետք է վճարվի ռեսուրսների սպառման/շահագործման վճարին հավելյալ: Մեթոդաբանական երկրորդ մոտեցմամբ՝ բնական ռեսուրսների սպառման կամ ծախսի վճարները կարգավորում են դրանց շահագործման ինտենսիվությունը սեփականատիրոջ կողմից՝ ապահովելով նաև վերարտադրության միջոցների կուտակումը: Սովորաբար, բնական ռեսուրսների նկատմամբ սահմանված վճարները գանձում են՝

- սահմանված լիմիտների շրջանակում բնական ռեսուրսների օգտագործման իրավունքի,
- բնական ռեսուրսների գերնորմատիվային և ոչ ռացիոնալ օգտագործման,
- բնական ռեսուրսների պահպանության և վերարտադրության համար:

Փաստորեն, բնական ռեսուրսների օգտագործման իրավունքի վճարը իրականացվում է ռեսուրսների շահագործման հետ կապված և բնօգտագործման սուբյեկտի ջանքերից ու ներդրումներից անկախ եկամուտների միջոցով: Ընդ որում, բնական ռեսուրսների օգտագործման իրավունքի վճարն ընդգրկված է վարձակալման վճարի կազմի մեջ, իսկ վճարների դրույքաչափերը որոշվում են կադաստրային գնահատումների հիման վրա կամ պայմանագրային հիմունքներով՝ հաշվի առնելով ռեսուրսների մթերատվության, տեղանքի և շահագործման պայմանների տարբերությունները: Նման մոտեցումը կիրառվում է մասնավորապես Ռուսաստանում⁷:

Բնական ռեսուրսների պահպանության և վերարտադրության վճարը ներդրված է բնավերականգնողական գործունեության իրականացմանն ուղղված բյուջետային հատկացումների և մասնագիտացված կազմակերպությունների ծախսերի հատուցման նպատակով: Դրանց համապատասխան որոշվում են վճարների

դրույքաչափերը: Բնական ռեսուրսների գերնորմատիվային օգտագործման դեպքում ուժեղանում է բնօգտագործողների տնտեսական պատասխանատվությունը պետության առջև, քանի որ վճարը գանձվում է բազմապատիկի չափով: Պետք է նշել, որ թեև նորանկախ պետություններում արդեն գործում է բնական ռեսուրսների օգտագործման վճարովիության համակարգը, սակայն ոչ բոլոր երկրներում են տարբերակված օգտագործման իրավունքի և շահագործման (ծախս) վճարները: Այստեղ բնական ռեսուրսների վճարների համակարգը ներառում է սահմանված լիմիտների շրջանակներում օգտագործման և գերնորմատիվային օգտագործման վճարները:

Բնական ռեսուրսների վճարների չափերի որոշման **ժամանակակից մեթոդաբանությամբ առանձնացված է երեք մոտեցում՝ ծախսային, արդյունքային և ռենտային**: Այս տեսանկյունից, ամենևին պատահական չէ գիտական հետազոտությունների աշխուժացումը՝ նվիրված շրջակա միջավայրի ասիմիլյացիոն պոտենցիալի վրա բացասական ազդեցության, տնտեսական վնասի և աղտոտման վճարների վերլուծությանը: Մասնագետների կարծիքով՝ այսպես է ձևավորվում բնօգտագործման վճարների մեկ այլ տեսակ՝ շրջակա միջավայրի աղտոտման վճարները (հարկեր, որոնք, ըստ էության, բնական ռեսուրսների օգտագործման տարատեսակ են): Տվյալ պարագայում որպես ռեսուրս դիտարկվում է **շրջակա բնական միջավայրի ասիմիլյացիոն պոտենցիալը**, որը միաժամանակ, բնութագրում է էկոլոգիական համակարգերի կայունությունն արտաքին ազդեցությունների նկատմամբ⁸:

Էկոլոգիական կարգավորման ժամանակակից գնային գործիքներից են նաև **մունիցիպալ մաքրման սարքավորումների օգտագործման վճարները**: Ըստ էության, դրանք իշխանության տեղական մարմինների ծառայությունների համար սահմանված վճարներն են՝ օգտագործելով միասնական, ինչպես նաև անհատական սակագներ: Այստեղ հաշվի են առնվում աղտոտման ծավալներն և

⁷ «Շրջակա բնական միջավայրի պահպանության մասին» ՌԴ օրենք, 2002 թ., հոդ. 3:

⁸ Гусев А.А., Соотношение рентных доходов и платежей в сфере использования биологических ресурсов и биоразнообразия// Экономика природопользования. М., ВНИТИ. 2002, №5, с.9-21.

բաղադրությունը: Բազմաթիվ երկրներում վճարների այս տեսակը հաշվառում են մունիցիպալ ծառայությունների սակագներում:

Էկոլոգիական վճարների համակարգի կարևոր բաղադրիչներից են հատկապես **ռեսուրսային վճարները**, որպես բնական ռեսուրսների օգտագործման, վերարտադրության և պահպանման իրավունքի վճար: Սպառվող ռեսուրսների համար, օրինակ, առանձնացված են հարկեր, եկամտահարկեր և ռոյալթի: Հայտնի են նաև **Էկոլոգիական հարկեր՝ սահմանված արտադրանքի գնով**, որպես այնպիսի արտադրանքի գների նկատմամբ հավելում, որի արտադրությունը կամ հետագա օգտագործումը բացասաբար է ազդում շրջակա միջավայրի վրա: Մասնագետների պնդմամբ՝ տվյալ հարկերի կիրառումը գործող շուկայից էկոլոգիապես անբարենպաստ արտադրանքի և տեխնոլոգիաների դուրսմղման հեռանկարային միջոց է:

Անհրաժեշտ է նշել նաև **Էկոլոգիական ապահովագրումը**, որպես բարձր էկոլոգիական ռիսկով գործող ձեռնարկությունների կողմից երրորդ անձանց պատճառված վնասի տնտեսական (գույքային) պատասխանատվության ապահովագրում: Ապահովագրման հիմնական նպատակն է վնասի հատուցումը, ինչպես նաև վթարների կանխման տնտեսական խրախուսումը: Մասնագետները համարում են, որ էկոլոգիական ռիսկի ապահովագրումը կարող է դառնալ բնապահպանական վճարների մուտքերի համալրման կայուն միջոց:

2.2. Մեթոդական մոտեցումներ և գնահատման ցուցանիշներ

Վճարների գանձման մեթոդական մոտեցումները համապատասխանում են երկու հայեցակարգային դրույթների, որոնցով որոշվում են վճարների նորմատիվները և չափերը: ՊայմանակաՆորեն դրանք անվանում են «ծախսային» և «վնասաբեր»:

Ծախսային հայեցակարգը ենթադրում է ձեռնարկության վճարների չափերի որոշումն ըստ բնական միջավայրի աղտոտման տարածաշրջանային նորմատիվների: Հաշվարկը կատարվում է՝ ելնելով տարածաշրջանի ֆինանսական ռեսուրսների տարեկան ծավալից, որ անհրաժեշտ է բնական միջավայրի նորմատիվային

որակի փուլային հաղթահարման համար: Ընդհանուր առմամբ, աղտոտման վճարի նորմատիվը որոշում են հետևյալ բանաձևով.

$$V_i = (\sigma + k) / M_j^n \quad (1),$$

որտեղ՝

V_i –ն տվյալ տարածաշրջանի ձեռնարկության աղտոտող նյութերի արտանետման/արտահոսքի վճարի նորմատիվն է, դրամ միավոր/պայմ.տ,

σ –ն տարածաշրջանի շրջակա միջավայրին պատճառված վնասի մասնակի հատուցմանն ու բնապահպանական միջոցառումների անցկացմանն անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների միջին տարեկան ծավալն է, դրամ. միավոր,

k –ն տարածաշրջանային բնապահպանական ծրագրերը ֆինանսավորող ձեռնարկության մասնակցության գործակիցն է,

M_j^n – ն ձեռնարկության աղտոտող նյութերի արտանետման/արտահոսքի միջին տարեկան ծավալն է՝ հաշվարկված տարեկան լիմիտներից (սահմանաչափով), պայմ.տ:

Այսպիսով՝ լիմիտի շրջանակներում ձեռնարկության կողմից բնական միջավայրի տարեկան աղտոտման գումարային վճարը հաշվարկվում է՝ ելնելով ձեռնարկության փաստացի արտանետումների/արտահոսքերի նորմատիվից և ծավալից: Տվյալ մեթոդական մոտեցմամբ որոշվում/սահմանվում են աղտոտման վճարների նորմատիվներն աղտոտման որոշակի լիմիտների շրջանակներում և գերնորմատիվային աղտոտման դեպքում: Ընդ որում, գերնորմատիվային աղտոտման վճարի նորմատիվը որոշվում է յուրաքանչյուր ձեռնարկության համար առանձին՝ ելնելով դրա տարեկան կապիտալ ներդրումներից և տվյալ տարվա համար նախատեսված աղտոտումների կրճատման ծավալից:

Ինչպես վկայում է ծախսային մեթոդական մոտեցման կիրառման միջազգային փորձը, դա աղտոտման վճարների չափերի հիմնավորման տեսանկյունից ունի որոշակի բացթողումներ, մասնավորապես՝

- աղտոտումներով պայմանավորված կախված վնասի միավորի գիտականորեն հիմնավորված ծախսերի նորմատիվների բացակայություն,

- բնապահպանական նշանակության պլանային կապիտալ ներդրումների որոշման բարդություն,
- ծախսային մոտեցմամբ ապահովված չէ ձեռնարկության պատասխանատվությունը տնտեսական գործունեության էկոլոգիական հետևանքների և վնասների հատուցման պարտադիր լինելու նկատմամբ:

«Վնասաբեր» մեթոդական մոտեցմամբ որոշվում է կապը վճարների չափերի և շրջակա միջավայրի աղտոտման վնասի աստիճանի միջև: Նման սկզբունքով, օրինակ, **Ռուսաստանում և Ուկրաինայում** գանձվում են ջրային օբյեկտների արտահոսքերի վճարները, թեև այդ երկրներում զգալիորեն տարբերվում են վնասի գնահատման մեթոդները: Ռուսաստանում գործող (1993-ից) մեթոդական մոտեցումների համաձայն՝ բնօգտագործողների՝ շրջակա միջավայրի աղտոտման վճարի չափը որոշվում է որպես աղտոտման վճարի գումար՝

- աղտոտող նյութերի սթխ-ները չգերազանցող ծավալներով,
- ժամանակավորապես համաձայնեցված արտահոսքերի սահմաններում,
- գերնորմատիվային աղտոտման դեպքում:

Վճարի նորմատիվը տնտեսությանը պատճառված տարեկան տեսակարար տնտեսական վնասի որոշակի մասն է, որը հատուցում է ռեցիպիենտների վրա աղտոտող նյութերի ազդեցության կանխման և արտահոսքերի սահմանային թույլատրելի մակարդակի հաղթահարման ծախսերը: Արտահոսքերի վճարի նորմատիվը տարեկան տեսակարար տնտեսական վնասի (1տ աղտոտող նյութերի համար) և կոնկրետ բաղադրիչի հարաբերական վտանգի ցուցանիշի արտադրյալն է, որը հակադարձ է սթխ-ին⁴.

$$H_n = Y \cdot q \cdot A \cdot q \cdot K_n \quad (2),$$

որտեղ՝

- H_n –ն 1տ i – աղտոտող նյութի արտահոսքի վճարի բազային նորմատիվն է,
- Y –ն 1տ աղտոտող նյութի արտահոսքի տեսակարար տնտեսական վնասն է,
- A –ն հարաբերական վտանգի գործակիցն է,
- K_n –ն վճարի ինդեքսավորման գործակիցն է:

Միջազգային պրակտիկայում աղտոտման վճարների նորմատիվների որոշման համար վնասների գնահատման մեթոդական մոտեցումը հիմնված է աղտոտման տնտեսական հետևանքների հաշվառման վրա, ինչը հնարավորություն է տալիս իրագործելու վնասի հատուցման սկզբունքը: Սակայն փաստացի վնասի չափով վճարների գանձումը հաշվի չի առնում ձեռնարկությունների իրական վճարունակությունը, և արդյունքում հաշվարկված վճարների գումարը համարժեք չէ դրան: Նման իրավիճակ, ինչպես արդեն նշվեց, ձևավորվում է նաև Հայաստանում, մասնավորապես՝ լեռնարդյունահանման և կենսառեսուրսների օգտագործման բնագավառներում:

Անկախ մեթոդական բարդություններից, էկոլոգիական վնասների տնտեսական գնահատման և դրամական հատուցման մոտեցումը զբաղեցնում է իր ուրույն տեղը բնապահպանական և բնօգտագործման վճարների ձևավորման մեթոդաբանության մեջ: Վնասների չափերի համարժեք և ճիշտ որոշումը **դարձել է վճարների որոշման մեթոդական նախապայման**, որի կիրառումն ապահովում է զգալի էկոլոգիական արդյունք: Դանիայում, օրինակ, ընդունված է «էկոլոգիական վնասի մասին» (1994 թ.) հատուկ օրենք, որը սահմանում է էկոլոգիական վնասի հատուցման իրավական պատասխանատվություն:

Ակնհայտ է, որ **վճարների և նորմատիվների որոշման մեթոդական մոտեցումների ընտրումը բավականին բարդ և գիտատար խնդիր է**: Բոլոր դեպքերում վճարների նշանակությունը ոչ թե հետևանքների վերացումն է, այլ շրջակա միջավայրի աղտոտման պատճառների կանխումը: **Հետևապես՝ դրանք պետք է լինեն պրննետիվ, այսինքն՝ վնասը կանխարգելող, իսկ ըստ չափերի՝ հատուցող**: Սակայն գործնականում լրիվ ծավալով հատուցման վնասների իրացումը հաճախ անհնարին է, քանի որ աղտոտման տնտեսական վնասը, որպես կանոն, գերազանցում է ձեռնարկության ֆինանսական հնարավորությունները դրա շահութաբերության մասով:

Գիտական գրականության մեջ բազմազան են մեթոդական մոտեցումները և ցուցանիշները, որոնց միջոցով, օրենսդրական կարգավորմամբ, որոշվում են բնօգտագործման վճարները: Դրանք,

ինչպես արդեն նշվեց, բնական ռեսուրսների համար սահմանված վճարներ են, որոնք, ըստ էության, բնօգտագործողի կողմից բնական ռեսուրսի որոնման, պահպանման և վերականգնման հատուցման ծախսերն են: Գնահատման ցուցանիշները տարբեր են¹⁶: Օրինակ՝ հողի համար վճարն իրականացվում է 3 ձևով՝ հողային հարկ, վարձակալման վճար, հողի նորմատիվային գին:

Հողային հարկի գանձումը կատարվում է գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական հողերի համար: Ցուցանիշները հետևյալն են.

1. $H_3 = n \cdot q \cdot S$ (3) գյուղատնտեսական հողերի համար սահմանված հարկերի դրույքաչափն է (H_3),

որտեղ՝

n - ն հողային հարկի նորմատիվային դրույքաչափն է,
 S -ն հողամասի մակերեսն է, քառ.մ:

2. **Ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի հարկի դրույքաչափը (H_3).**

$$H_3 = n \cdot q \cdot S \cdot K_1 \cdot q \cdot K_2 \cdot q \cdot K_3 \quad (4),$$

որտեղ՝

n -ն հողային հարկի նորմատիվային դրույքաչափն է,
 S -ն հողամասի մակերեսն է, քառ.մ,
 K_1 -ն առողջարանային գոտիներում բարձրացնող գործակիցն է (1,5-ից մինչև 8),
 K_2 -ն պատմական շինությունների հաշվառմամբ բարձրացնող գործակիցն է (2,5-ից - 4),
 K_3 -ն քաղաքի սոցիալ-մշակութային ներուժի հաշվառմամբ բարձրացնող գործակիցն է (2,2-ից մինչև 3):

3. **Հողի նորմատիվային գինը.**

$$H_3^0 = H_i / r \quad (5),$$

որտեղ՝

H_i - ն հողային հարկի նորմատիվային վճարն է, դրամ. միավոր,
 r -ն պետության կողմից սահմանված դրույքաչափն է:

Ընդերքօգտագործման **վճարները** ձևավորվում են հետևյալ հավաքագրումից՝

1. ընդերքօգտագործման,
2. հանքահումքային բազային վերարտադրման,
3. ակցիզային,
4. լիցենզիայի տրամադրման,
5. ծովային հատակային տեղամասերի և ջրատարածության օգտագործման և այլն:

Որոշակի ընդհանրություններ առկա են նաև ջրային, անտառային և կենդանական աշխարհի ռեսուրսների վճարների համակարգում:

Շրջակա միջավայրի աղտոտման վճարը, ըստ էության, դրան հասցված վնասի հատուցումն է: Համաձայն ժամանակակից մեթոդական մշակումների՝ միջավայրի աղտոտման վճարները և ցուցանիշները տարբերակվում են հետևյալ կերպ՝

1. Անշարժ աղբյուրներից աղտոտիչների մթնոլորտ արտանետման վճարներ

- 1.1. Շարժական աղբյուրներից մթնոլորտային արտանետումների վճար
- 1.1.1. 1տ i - ն տեսակի աղտոտող նյութի արտանետման բազային նորմատիվն է (H).

$$H = Y \cdot q \cdot K_o \cdot q \cdot K_H \quad (6),$$

որտեղ՝

Y -ն 1տ արտանետվող կամ արտահոսող աղտոտիչի տեսակարար տնտեսական վնասն է, դրամ. միավոր,
 K_o -ն հարաբերական վտանգի գործակիցն է ($K_o=1/սթխ$),
 K_H -ն վճարի ինդեքսավորման գործակիցն է:

- 1.1.2. Սահմանված լիմիտների շրջանակներում էմիսիայի վճար (Π_H)

$$\Pi_H = M_{սթա} \cdot q \cdot H \cdot q \cdot K_E \quad (7),$$

որտեղ՝

$M_{սթա}$ -ն աղտոտող նյութի փաստացի արտանետումն է, տ,
 H -ն վճարի բազային նորմատիվն է, դրամ. միավոր,
 K_E -ն տվյալ տարածաշրջանում էկոլոգիական իրավիճակի գործակիցն է:

¹⁶ Заломнова О.Н., Ткаченко Ю.Л., Природопользование. МГИУ, М., 2006, с. 118-128.

1.1.3. Ժամանակավոր սահմանված լիմիտների վճար (ԺԼՎ)

$$\text{ԺԼՎ} = 5 \text{ գ H գ } (M_{\text{ԺՍԱ}} - M_{\text{սթա}}) \quad (8),$$

1.1.4. Գերլիմիտային էմիսիաների վճար
 Գերլիմիտային արտանետումների և արտահոսքի վճարը (ՎԳԼ) որոշվում է՝ բազմապատկելով փաստացի արտանետման կամ արտահոսքի լիմիտների նկատմամբ գերազանցումը, բազային դրույքաչափը և քսանհինգապատիկ բարձրացնող գործակիցը.

$$\text{ՎԳԼ} = 25 \text{ գ H գ } (M_{\text{փաստ}} - M_{\text{սթա}} \text{ կամ } M_{\text{ԺՍԱ}}) \quad (9)$$

2. Շարժական աղբյուրներից մթնոլորտային օդի աղբյուրման վճարներ

Առանձնացված է վճարների երկու բազային նորմատիվ, կախված՝

- այրող վառելիքի տեսակից,
- աղտոտող շարժական աղբյուրի տեսակից:

2.1. i-տեսակի 1տ վառելիքից օգտագործման արդյունքում առաջացած աղտոտող նյութերի թույլատրելի արտանետումների տեսակարար վճար (Y), դրամ. միավոր.

$$Y_i = \sum_{i=1}^n H_{iM_i} \quad (10),$$

որտեղ՝

H_i- ն նորմայի շրջանակներում i – տեսակի 1տ աղտոտիչի արտանետման բազային նորմատիվն է, դրամ.միավոր,
M_i-ն 1տ i – տեսակի վառելիքի օգտագործման հետ կապված կարգավորված/արտաքին տրանսպորտային միջոցի աշխատած/ արտանետվող գազերում պարունակվող աղտոտիչի զանգվածն է, տ:

2.2. Աղտոտող նյութերի թույլատրելի արտանետումների վճար (ՈՒԿ, դրամ. միավոր)՝

$$\text{ՈՒԿ} = \sum_{i=1}^n Y_j T_j \quad (11),$$

որտեղ՝

Y_j-ն 3տ j – տեսակի վառելիքի թույլատրելի արտանետումների վճարն է, դրամ.միավոր,

T_j-ն հաշվետու ժամանակահատվածում օգտագործված j-տեսակի վառելիքի քանակությունն է, տ:

2.3. Աղտոտող նյութերի գերլիմիտային արտանետումների վճար (Ո), դրամ.միավոր.

$$\text{Ո} = \sum_{i=1}^n \text{ՈԿ}_i D_i \quad (12),$$

որտեղ՝

ՈԿ_i-ն D_i-ի տեսակի տրանսպորտային միջոցի թույլատրելի արտանետումների վճարն է, դրամ.միավոր,

D_i-ն ստանդարտներին չհամապատասխանող տրանսպորտային միջոցների մասնաբաժինն է:

Ուշագրավն այն է, որ արտանետվող գազերի վնասագործման չեզոքարանների օգտագործման դեպքում կիրառվում են նվազեցնող գործակիցներ՝

- չէթիլացված բենզին և դիզելային վառելիք օգտագործող ավտոտրանսպորտի համար – 0,05,
- այլ ավտոտրանսպորտային միջոցների համար – 0,1:

Թափոնների տեղադրման վճարի նորմատիվները որոշվում են՝ կախված դրանց վտանգի աստիճանից: Անվտանգ են համարվում արդյունահանող և վերամշակող արդյունաբերության թափոնները: Այս մոտեցումն օգտագործվում է բազմաթիվ երկրներում, թեև վճարների դրույքաչափերի սահմանման քաղաքականությունը, մասնագետների կարծիքով, ունի որոշակի բացթողումներ, մասնավորապես՝ ընդերքօգտագործման թափոնների գոյացման, տեղադրման, վերամշակման և օգտագործման մասով:

Ընդունված մեթոդական մոտեցմամբ՝ թափոնների տեղադրման վճարը (Ո) որոշվում է հետևյալ բանաձևի օգնությամբ.

$$\text{Ո} = \sum_{i=1}^n \text{ՇԴ}_i \text{ գ M}_i + 5\text{ՇԴ}_i \text{ գ } (M_i - M_i) \quad (13),$$

որտեղ՝

ՇԴ_i -ն լիմիտի շրջանակներում i – տեսակի 1տ թափոնի տեղադրման վճարի նորմատիվն է, դրամ. միավոր,

M_i-ն թափոնի քանակությունն է լիմիտի շրջանակում, տ,

M_i -ն փաստացի տեղադրված թափոնի քանակությունն է:

Այս մոտեցմամբ ևս կիրառվում են տարբեր գործակիցներ՝ 0,3՝ նվազեցման գործակիցը, որը հաշվի է առնում թափոնների տեղադրումը բնօգտագործողի տարածքում,

3-ից մինչև 5 բարձրացնող գործակիցը, որը կիրառվում է թափոնների տեղադրման դեպքում ջրապահական, սելիտերային (բնակության համար պիտանի) և ռեկրեացիոն գոտիներում,

5՝ բարձրացնող և թափոնների տեղադրման վայրը հաշվի առնող գործակիցն է, որը կիրառվում է չթույլատրված աղբյուրներում թափոնների տեղադրման դեպքում:

Դժվար չէ նկատել, որ վճարների դրույքաչափերի դեպքում կարևոր կարգավորիչ դերակատարություն ունեն **էկոլոգիական գործակիցները**: Դրանց կիրառման արդյունավետությունը էապես կախված է վճարների որոշման մեթոդաբանությունից և գիտական հիմնավորվածության աստիճանից: Հատուկ նշանակություն ունի նաև աղտոտող նյութերի արտանետման վճարների **դրույքաչափերի ինդեքսավորումն** ըստ հետևյալ բանաձևի.

$$K_{ինդ} = 1 + սթխ_{ս} / սթխ_{բ}, \quad (14),$$

որտեղ՝

$K_{ինդ}$ –ն վճարների դրույքաչափերի ինդեքսավորման գործակիցն է, սթխ_ս–ն սահմանային թույլատրելի քանակությունն է՝ հաշվարկված 1 մարդու համար, սթխ_բ–ն սահմանային թույլատրելի խտությունը՝ հաշվարկված բույսերի համար:

Աղտոտող նյութերի մթնոլորտային արտանետումների դեպքում, օրինակ, վճարների նոր դրույքաչափը ($\Gamma_{ո}$), որոշվում է հետևյալ կերպ.

$$\Gamma_{ո} = K_{ինդ} \cdot q \cdot \Gamma_{օդ}, \quad (15),$$

որտեղ՝

$\Gamma_{օդ}$ –ն արտանետման վճարի գործող դրույքաչափն է¹⁷: Մեթոդական այս մոտեցման կիրառումը կարևորվում է հատկապես հասարակական առողջության պահպանման տեսանկյունից, թեև պահանջում է մեծ ծավալի տեղեկատվության օգտագործում:

Հեռանկարային է նաև արտադրության էկոլոգիականության գնահատման՝ ըստ էկոլոգիական ռիսկի ցուցանիշը (Էռ).

¹⁷ Мамин Р.Г., Экология здоровья. ЮНИТИ, М., 2003. – с. 108-109.

$$E_{ռ} = [4 - (So/S + Bo/B + Mo/M + m/M)] \cdot 100, \quad (16),$$

որտեղ՝

արտադրական համակարգի շահագործման հետ կապված՝
4՝ էկոլոգիական ռիսկի գործոնների քանակություն,
S՝ արտադրական համակարգի տեղադրման տարածքի լանդշաֆտի մակերես, հա,
So՝ տարածքի լանդշաֆտի մակերեսը, փոքրացած արտադրական համակարգի տարածքի մակերեսի մեծության չափով, հա,
B՝ ձեռնարկության կողմից բնական ջրավազան և կյուլոի վերադարձած ջրի տեսակարար ծավալը, խոր.մ/ժամ,
Bo՝ մինչև սանիտարական նորմա մաքրված վերադարձված ջրի տեսակարար ծավալը, խոր.մ/ժամ:

2.3. Ազգային փորձի վերլուծություն և գնահատում

Հայաստանում բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգը գործում է ըստ հետևյալ օրենքների, կառավարության որոշումների և կարգերի՝

- «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք (ընդ. 28.12.1998 թ.),
- «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք (ընդ. 15.05.2001 թ.),
- «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենք (ընդ. 20.12.2006 թ.),
- «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ Կառավարության 17.10.2001 թ. №986Ն որոշում,
- «Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկման կարգ» (հաստատված է ՀՀ Կառավարության 2001 թ. հոկտեմբերի 17-ի №986 Ն որոշմամբ),
- «Բնապահպանական և բնօգտագործման վճարների վճարողների հաշվարկման կարգ» (հաստատված է ՀՀ Կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 17-ի №986Ն որոշմամբ),

- «Դրույքաչափեր բնօգտագործման վճարի» (հաստատված է ՀՀ Կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 30-ի №864 որոշմամբ):

Թվարկված օրենսդրական ակտերով, որոշումներով և կարգերով կանոնակարգված է բնապահպանական և բնօգտագործման վճարների ձևավորման, հաշվարկման դրույքաչափերի որոշման և նպատակային օգտագործման գործընթացը՝ ներառյալ ոլորտում կիրառվող հիմնական հասկացությունների/տերմինների գիտական սահմանումները, պատժամիջոցների կիրառման կանոնները:

Առանձնացված են վճարների դրույքաչափերի որոշման ցուցանիշները:

Մթնոլորտային արտանետումների դեպքում, օրինակ, մթնոլորտային օդն աղտոտող բոլոր նյութերի համար վճարի դրույքաչափը ($\Gamma_{\text{օդ}}$) յուրաքանչյուր տոննայի արտանետման դիմաց հաշվարկվում է հետևյալ բանաձևով⁹.

$$\Gamma_{\text{օդ}} = 900 \text{ դրամ/տոննա} \quad (17),$$

որտեղ՝

Սթև . ն օդում տվյալ նյութի միջին օրական սահմանային թույլատրելի խտանյութն է:

Ընդ որում, համաձայն «Բնապահպանական դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի (2006 թ.) հոդ. 2-ի «գ» կետի, հաշվարկվող դրույքաչափերը կարող են ավելանալ 1,5 անգամ: Նույն օրենքով մանրամասն սահմանված են վճարների դրույքաչափերը շարժական և ամրակայված (անշարժ) աղբյուրներից օդային ավազան արտանետվող վնասակար նյութերի համար:

Ջրային ավազան վնասակար նյութերի և միջոցառումների համար յուրաքանչյուր տոննայի արտահոսքի/արտանետման դիմաց վճարի դրույքաչափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\Gamma_{\text{ջուր}} = 10000 \text{ դրամ/տոննա} \quad (18),$$

որտեղ՝

սթև_{ջուր}–ն ձկնատնտեսական նպատակով օգտագործվող ջրում տվյալ նյութի սահմանային թույլատրելի կոնցենտրացիան է (հոդ. 2-ի 2-րդ կետ, «բ» ենթակետ):

Օրենքի 3-րդ և 4-րդ հոդվածներով սահմանված են շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների տեղա-

դրման, ինչպես նաև շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց վճարի դրույքաչափերը համապատասխանաբար:

Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասով «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի (1998 թ., հավելված 1) 7-րդ հոդվածի և ՀՀ Կառավարության 30 դեկտեմբերի 1998 թվականի №864 որոշման 2-րդ կետի «ա» ենթակետի համաձայն (հավելված 7)՝ սահմանված են վճարների հաշվարկման հետևյալ բանաձևերը.

$$ԲՎ = Մ \cdot \Gamma_{\text{օ}} \times (\Gamma_{\text{ի}} \times \Gamma_{\text{Տ}}/100), \text{ երբ } (\Gamma_{\text{ի}} \times \Gamma_{\text{Տ}}/100) > \Gamma_{\text{ի}} \quad (19)$$

$$ԲՎ = Մ \cdot \Gamma_{\text{օ}} \times \Gamma_{\text{ի}} (\Gamma_{\text{ի}} \times \Gamma_{\text{Տ}}/100), \text{ երբ } (\Gamma_{\text{ի}} \times \Gamma_{\text{Տ}}/100) \leq \Gamma_{\text{ի}} \quad (20)$$

և որոշված են բնօգտագործման վճարի դրույքաչափերը՝

- ջրօգտագործման համար,
- պինդ օգտակար հանածոների մարված պաշարների, ստորերկրյա քաղցրահամ ու հանքային ջրերի և աղի արդյունահանված պաշարների համար,
- կենսապաշարների օգտագործման համար,
- պինդ օգտակար հանածոների մարված պաշարների համար՝ ըստ վճարի հաստատագրված դրույքաչափերի:

Այսպիսով՝ մթնոլորտային օդի աղտոտման վճարների գործող դրույքաչափերը հաշվարկվում են մեթոդական նոր մոտեցմամբ՝ հաշվի առնելով առանձին աղտոտող նյութերի թունավորության աստիճանը: Դրույքաչափը որևէ «բազային աղտոտող նյութի համար» բազմապատկվում է գործակցով, որ հակադարձ համեմատական է օդի որակի համապատասխան ստանդարտին՝ սահմանային թույլատրելի խտությանը: Դա նշանակում է, որ ինչքան «կոշտ» է ստանդարտը, այնքան բարձր է վճարի դրույքաչափը: Վնասների դրույքաչափերը պետք է վերանայվելին 1998-2000 թթ., ընդ որում, քրոմի օքսիդի համար դրույքաչափը աճեց 316 անգամ այն դեպքում, երբ քլորոպրենի համար սահմանված դրույքաչափը մնաց անփոփոխ, իսկ փոշու և ծծմբի երկօքսիդի դրույքաչափերը նվազեցին մոտ 2/3-ի չափով: Գերլիմիտային արտանետումների/արտահոսքերի դրույքաչափը եռապատկվում է: «Բազային աղտոտող նյութի» գործոնի կիրառումը բնորոշ է նաև ջրային ավազանի աղտոտման դեպքում: Հատկանշական է, որ 2000-ից բնապահ-

պանական վճարները գանձվում են մթնոլորտային օդն աղտոտող 10 նյութերի համար (ածխածնի մոնօքսիդ, ազոտի օքսիդներ, ծծմբի երկօքսիդ, քլոր, քլորոպրեն, քրոմի օքսիդ, ֆորմալդեհիդ, տոլուոլ, քսիլոլ): Աղտոտող նյութերի ցանկը (1993-1999 թ.) բաղկացած էր 51 անվանումից:

Աղտոտող նյութերի ցանկի կրճատումը (մինչև 1999 թ.) կատարվեց նաև ջրերի աղտոտման և բնապահպանական վճարների գանձման համակարգում: Նման քայլը, պետական կառավարման համապատասխան մարմինների կողմից հիմնավորվում է լաբորատոր ներուժի բացակայությամբ/սղությամբ: Ստացվում է այնպես, որ աղտոտող նյութերի տեսակները և քանակությունը հարմարեցվում են եղած լաբորատոր սարքավորումներին, այլ ոչ թե ջրի որակի պատշաճ հսկմանը և պահպանմանը: Մեր կարծիքով՝ մոտեցումը գիտական հիմնավորվածության տեսանկյունից այնքան էլ արդարացված չէ:

Մասնավորապես՝ այդ սկզբունքով արդեն 1999 թ. թթվածնի կենսաբանական պահանջն աճել է 6, իսկ կախված նյութերինը՝ մոտ 8 անգամ: Նույն կերպ բարձրացել են դրույքաչափերը ծանր մետաղների, աղերի, ցիանի և ցիանի միացությունների համար: Այստեղ ևս առկա է դրույքաչափերի վերանայման գիտական հիմնավորվածության ցածր մակարդակ:

Թափոնների տեղադրման (պահման) բնապահպանական վճարի դրույքաչափերի վերանայումը և նորերի կիրառումը մեկնարկել են 2000-ից (1998 թ. համեմատ աճելով 2 անգամ): Հետագայում, համաձայն «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» 2006 թ. ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի, դրույքաչափերը կրկին վերանայվել են ցուցանիշների աճի ճանապարհով: Նշենք, որ բնապահպանական բնագավառի օրենսդրական բարեփոխումները որոշակի **դրական ազդեցություն ունեցան շրջակա միջավայրում արտադրության և սպառման թափոնների տեղադրման դիմաց վճարների դրույքաչափերի համակարգի ձևավորման վրա: Ուշագրավ են**, մասնավորապես, արդյունաբերական հրապարակներում թափոնների տեղադրման/պահման վճարների դրույքաչափերը, **որոնք որոշված են թափոնների պահման ժամկետների հաշվառմամբ:** Դա սկզբունքորեն նոր մոտեցում է, որի

կիրառման արդյունավետությունը դեռևս խոր ուսումնասիրման կարիք ունի: Սակայն, անկախ դրույքաչափերի փոփոխության դրական միտումներից, այստեղ ևս, մեր կարծիքով, առկա են մեթոդաբանության բացթողումներ, քանի որ թափոնների դասակարգման գործող սկզբունքների կիրառման և չստանդարտացված պահման պայմանների, ինչպես նաև ժամանակակից պոլիգոնների բացակայության դեպքում **բավականին բարդ է ճշգրիտ գնահատել վտանգավոր թափոնների բացասական ազդեցությունների հետևանքները հնարավոր վնասների հաշվառմամբ: Հետևաբար՝ դրույքաչափերը որոշակիորեն պայմանական բնույթի են: Անհրաժեշտ է.**

- **վերանայել** լեռնարդյունահանող իրավաբանական անձանց կողմից տեղադրվող, ինչպես նաև հողաձածկույթի քանդման և շինարարության հետևանքով, առաջացած ոչ վտանգավոր թափոնների դրույքաչափերը,

- **ուժեղացնել** մշտադիտարկումը թափոնների, ըստ վտանգավորության, դասակարգման նկատմամբ հատկապես լեռնարդյունահանման և շինարարության ոլորտներում: Նման կարծիքի են նաև բնապահպան ՀԿ-ները:

Ինչ վերաբերում է էկոլոգիապես վտանգավոր արտադրանքին, ապա վճարներ սահմանված են և՛ հայրենական, և՛ ներմուծվող արտադրանքի համար: Այդ վճարները մասնագետների կողմից դիտվում են որպես դրամամուտքերի աղբյուր, այլ ոչ թե գործունեությունը խրախուսող գործիք: Ընդ որում, արտադրանքի կատեգորիաների ցանկը ևս 1999-ից ենթարկվեց փոփոխության՝ բարձրացնելով ակցիզները շարժիչային վառելիքի դիմաց և պահպանելով եկամուտների մակարդակի կայունությունը: 2000 թ. դրությամբ էկոլոգիապես վտանգավոր արտադրանքն ընդգրկում էր 22 կատեգորիա: Ներկայումս, համաձայն «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի հոդ. 4-ի, կատեգորիաների ցանկը զգալիորեն մեծացել է, իսկ դրույքաչափերը (%) սահմանված են⁹

- ՀՀ ներմուծվող ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ,
- ՀՀ-ում արտադրվող և իրացվող ապրանքների իրացման շրջանառության նկատմամբ:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ-ում բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքաչափերը գտնվում են չընդհատող փոփոխությունների ճանապարհին՝ ոչ միայն երկրի ֆինանսական անկայունության, այլ նաև իրականացվող էկոլոգիական քաղաքականության անկատարության և տնտեսական մեխանիզմների/գործիքների գիտական հիմնավորվածության ոչ բավարար մակարդակի պատճառով:

3. ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ

3.1. Տնտեսական զարգացման էկոլոգիական առանձնահատկությունները

Տնտեսական զարգացման ժամանակակից գիտական գնահատումները վկայում են, որ բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգը դասվում է շրջակա միջավայրի պահպանության և ռացիոնալ բնօգտագործման կառավարման թերևս ամենարդյունավետ տնտեսական լծակների շարքը, **որի հիմնական նպատակը տնտեսավարող սուբյեկտների կողմից բնական ռեսուրսներին և շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատուցումն ու բնապահպանական գործունեության խթանումն է:**

Շուկայական տնտեսության անցման շրջանում տնտեսական զարգացումն ու տնտեսական աճը դարձել են յուրաքանչյուր երկրի տնտեսական քաղաքականության երկարաժամկետ և կարևորագույն նպատակ: Տնտեսական աճը հաճախ ձեռք է բերվում ի հաշիվ բնական ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման և շրջակա միջավայրի որակի անցանկալի փոփոխությունների:

Գիտական ուսումնասիրություններից հայտնի է նաև, որ գոյություն ունի սերտ կապ շրջակա միջավայրի որակի և տնտեսական զարգացման ցուցանիշների միջև: Ընդ որում, շատ դեպքերում այդ կապը հակադարձ է, իսկ տնտեսական զարգացման ցուցանիշների աճը հանգեցնում է շրջակա միջավայրի որակի վատթարացման: Դա բացատրվում է նրանով, որ գործունեության գրեթե բոլոր տեսակներում հիմնականում գերակա է **տնտեսական շահը՝ առանց հաշվի առնելու այդ գործունեության հետևանքով շրջակա միջավայրին հասցված հնարավոր էկոլոգիական վնասը:**


Համաձայն ժամանակակից գիտական գնահատումների՝ որպես տնտեսական զարգացման էկոլոգիական հետևանքներն արտահայտող ցուցանիշ է դիտարկվում «**էկոլոգիական հետքը**»:

Վերջինիս կարևորությունն այն է, որ ազգային և համաշխարհային մակարդակներում նմանատիպ գործիքների օգտագործումը հնարավորություն է տալիս բարձրացնելու կառավարման արդյունավետությունը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող գործունեության բոլոր ոլորտներում՝ ապահովելով յուրաքանչյուր երկրի բնակչության էկոլոգիական անվտանգությունը:

Հայտնի է, որ 21-րդ դարի առաջին տասնամյակը ՀՀ տնտեսական բարձր աճի ժամանակաշրջան էր: Տնտեսության գրեթե բոլոր հատվածների զգալի զարգացումները նպաստեցին 2000-2008 թթ. ընթացքում համախառն ներքին արդյունքի աճին: Սակայն 2008 թ. համաշխարհային տնտեսական ճգնաժամը լրջորեն վտանգեց երկրի տնտեսական կայունությունը: Արդեն 2009 թ. արձանագրվեց տնտեսության 14.1% անկում, և թեև 2010 թ. ՀՆԱ-ն վերականգնեց աճի միտումը (2.1%), տնտեսության մի շարք առաջատար ճյուղեր դեռևս խոր ճգնաժամ էին ապրում:

ՀՀ-ում վերջին տարիներին տեսչական, վերահսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը և երկրի տնտեսության զարգացմանը զուգընթաց զգալիորեն ավելացել են բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերը՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով ՀՀ-ում բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման համար: Նշենք, որ միայն վերջին 12 տարվա ընթացքում դրանց ծավալներն աճել են ավելի քան 15 անգամ՝ 1998 թ. 608.0 մլն դրամից 2011 թվականին հավասարվելով 12 171.4 մլն դրամի: Ուշագրավ են, հատկապես, 2006-2011 թթ. դինամիկ փոփոխությունները՝ հաշվի առնելով տնտեսության նախաճգնաժամային և ճգնաժամային զարգացման առանձնահատկությունները (գծապատկեր 1)⁹:

⁹ ՀՀ/ «Ռիո+20» ազգային զնահատման զեկույց/ Տնտեսական մեխանիզմներ/ Բնօգտագործման և բնապահպանական վճարները 2006-2011 թթ.:



Գծապատկեր 1. Բնօգտագործման և բնապահպանական վճարների դինամիկան 2006-2011 թթ. (մլն դրամ)

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, թե՛ բնօգտագործման և թե՛ բնապահպանական վճարները 2006-2011 թթ. բնութագրվել են մուտքերի գրեթե անընդհատ աճով: Բացառություն է կազմել միայն 2009 թ. համանուն ցուցանիշների կտրուկ անկումը: Վերջինս հիմնականում պայմանավորված է եղել համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետևանքով, մասնավորապես՝ հանքարդյունաբերության ծավալների կրճատմամբ և շրջակա միջավայրի վրա մարդածին ազդեցության նվազեցմամբ: Այնուամենայնիվ, 2010 թ. վճարների գծով աճի միտումը վերականգնվել է և 2011 թ. հասել առավելագույն մակարդակի՝ գերազանցելով նախորդ տարիների փաստացի վիճակագրական ցուցանիշները:


Համաձայն «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի՝ բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարն է¹⁰: Առանձնացվում են բնապահպանական վճարի հետևյալ տեսակները՝

- ✓ վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելու,
- ✓ արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու,
- ✓ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների:

¹⁰ «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» 1998 թ. ՀՀ օրենք, հոդված 2:

Հիմք ընդունելով այդ դասակարգումը՝ նշենք, որ 2011 թ., օրինակ, ջրային ավազան թափված աղտոտիչ նյութերի դիմաց վճարը կազմել է բնապահպանական ընդհանուր վճարների 45.6%-ը, արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի դիմաց վճարը՝ 36.5%-ը: Ինչ վերաբերում է ՀՀ-ում արտադրված և իրացված, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց վճարին, ապա այն կազմել է բնապահպանական ընդհանուր վճարների 9.8%-ը, իսկ թափոնակուտակիչներում թափոնների տեղադրման դիմաց վճարը՝ 8.1%-ը (գծապատկեր 2)¹¹:

Ակնհայտ է, որ վճարները համարժեք չեն շրջակա միջավայրին պատճառվող վնասներին, ինչի մասին են վկայում նաև մթնոլորտային օդի որակի անկման և ջրերի աղտոտման վիճակագրական տվյալները:



Գծապատկեր 2. *Բնապահպանական վճարի կառուցվածքը, 2011 թ. (մլն դրամ)*

Դժվար չէ նկատել, որ բնապահպանական վճարների կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ (գրեթե 83%) ունեն օդային և ջրային ավազան արտանետված վնասակար նյութերի դիմաց վճարները:

Օդային ավազանի աղտոտման վճարների աճը պայմանավորված է եղել շարժական աղբյուրներից օդային ավազան վնասակար

¹¹ Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2012 թ. /Բնապահպանական և բնօգտագործման վճարներ:

նյութերի արտանետման ծավալների ավելացմամբ, որոշ տեսակների գծով բնապահպանական վճարների դրույքաչափերի բարձրացմամբ, ինչպես նաև նոր վճարատեսակների կիրառմամբ (օրինակ՝ հին ավտոմեքենաների ներմուծման ժամանակ ներդրված բնապահպանական վճարների համակարգը): Այնուամենայնիվ, մթնոլորտային օդի որակական ցուցանիշների դրական միտումներն աննշան են հատկապես շարժական աղբյուրների բացասական ազդեցության մասով: Ինչ վերաբերում է ջրային ավազանի աղտոտման գծով վճարներին, ապա կարող ենք նկատել, որ 2006-2010 թթ. ցուցանիշների դրական տեղաշարժը 2011 թ. փոխարինվել է վճարների կտրուկ աճով՝ պայմանավորված ջրային ավազանն աղտոտող նյութերի քանակական ավելացմամբ:


Բնօգտագործման վճարը պետական սեփականություն համարվող բնական պաշարների արդյունավետ, համալիր օգտագործման, ինչպես նաև տարբեր որակի բնական պաշարներ օգտագործողների համար տնտեսավարման հավասար պայմաններ ստեղծելու նպատակով այդ պաշարների օգտագործման դիմաց պետական բյուջե վճարվող վճարն է¹²: Բնօգտագործման վճարի տեսակներն են՝

- ջրօգտագործման,
- օգտակար հանածոների արդյունահանված պաշարների,
- կենսապաշարների օգտագործման:

«Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքի վերանայմամբ՝ **2011 թվականից որպես բնօգտագործման վճար է դիտվում նաև ռոյալթին՝ արդյունահանված մետաղական օգտակար հանածոների և դրանց վերամշակման արդյունքում ստացված արտադրանքի իրացման համար**: Սակայն առկա է որոշակի մտավախություն առ այն, որ «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու մասին (կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված ռոյալթիի կիրառումը կարող է բախվել լուրջ հարկային հակադրման: Նշենք նաև, որ 2011 թ. օգտագործված ջրի դիմաց վճար


¹² «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» 1998 թ. ՀՀ օրենք, հոդված 2:

րը կազմել է բնօգտագործման դիմաց ընդհանուր վճարների 3.5%-ը, օգտակար հանածոների արդյունահանման դիմաց վճարը՝ 94.7%-ը, կենսապաշարների օգտագործման դիմաց վճարը՝ 1.8%-ը (գծապատկեր 3)¹³:



Գծապատկեր 3. **Բնօգտագործման վճարի կառուցվածքը, 2011 թ. (մլն դրամ)**

Համաձայն վիճակագրական տվյալների՝ ՀՀ-ում բնօգտագործման վճարների 90%-ից ավելին պատկանում է օգտակար հանածոների արդյունահանման դիմաց վճարին: Հետևապես՝ առաջնային է ընդերքօգտագործման վճարների շարժընթացի վերլուծությունը (գծապատկեր 4)¹⁴:



Գծապատկեր 4. **Ընդերքօգտագործման վճարների շարժընթացի 2000-2011 թթ. (մլն դրամ)**

¹³ Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2012 թ. /Բնապահպանական և բնօգտագործման վճարներ:

¹⁴ Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2005-2012 թթ. /Ընդերքօգտագործման վճարները 2000-2011 թթ.:

Հարկ է նշել, որ ընդերքօգտագործման վճարների աճը պայմանավորված է եղել լեռնահանքային արդյունաբերության և շինարարության զարգացմամբ, օգտագործվող ազնիվ և գունավոր մետաղների, ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ծավալների ավելացմամբ, ազնիվ և գունավոր մետաղների միջազգային գների աճով, ինչպես նաև առանձին օգտակար հանածոների (հանքային ջուր, աղ, ոչ մետաղական հանածոներ) բնօգտագործման վճարի դրույքաչափերի բարձրացմամբ: Ինչ վերաբերում է 2009 թ. ցուցանիշին, ապա վերջինիս անկումը կախված է եղել, ինչպես արդեն նշվել է, համաշխարհային ճգնաժամի հետևանքով հանքարդյունաբերության ծավալների կրճատումից: Այստեղ պետք է հավելել, որ անկախ եկամտաբերության և ընդերքօգտագործման վճարների աճից՝ **ընդերքօգտագործումը շրջակա միջավայրի և դրա բնառեսուրսային ներուժը խախտող առավել ազդեցիկ տնտեսական ճյուղերից է:** Ոլորտում պահպանվում է բացասական սալդո թափոնագոյացման և թափոնօգտագործման/երկրորդային հումքի ստացման միջև: Առկա է «բացթողնված օգուտների» ֆենոմենը:


Այսպիսով, ըստ բնապահպանական և բնօգտագործման վճարների մուտքերի մասին ընդհանուր պատկերացման, կարելի է հանգել այն եզրակացության, որ, թեև վերոհիշյալ ցուցանիշները դրսևորում են աճի միտում, դեռևս չի նշանակում, թե համակարգը գործում է աղյուսավետորեն:

Ինչպես հայտնի է, գոյություն ունի էկոլոգիական վճարների հաշվարկման երկու մեթոդական մոտեցում: Վճարի չափի որոշման համար կարելի է հիմք ընդունել շրջակա միջավայրի աղտոտման արդյունքում և հետևանքով վնասի լրիվ տնտեսական գնահատման հաշվարկը կամ բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ծախսերը: Պայմանավորված վնասների գնահատման որոշակի մեթոդական դժվարություններով՝ նախընտրությունը հիմնականում տրվում է երկրորդ մոտեցմանը:

Վճարների հաշվարկման նմանատիպ ընտրություն է կատարվել նաև Հայաստանի Հանրապետությունում, ինչը էկոլոգիապես անընդունելի է, քանի որ **հնարավորություն չի տալիս կանխելու**

շրջակա միջավայրին հասցվելիք վնասը, այլ, պարզապես, պայքարում է արդեն իսկ հասցված վնասի հետևանքների վերացման դեմ: Որպեսզի էկոլոգիական վճարների միջոցով հնարավոր լինի լիարժեքորեն փոխհատուցել շրջակա միջավայրին և բնական ռեսուրսներին հասցված վնասը, անհրաժեշտ է հաշվարկման հիմքում դնել շրջակա միջավայրի աղտոտման արդյունքում և հետևանքով առաջացող լրիվ տնտեսական վնասի մեծությունը: Հետևապես՝ ներկայումս առաջնային է համարվում **բնօգտագործման և բնապահպանական վճարների հաշվարկման մեթոդաբանության վերանայումը:**

Ըստ փորձագետների գնահատականի՝ Հայաստանի պես զարգացման աստիճան ունեցող երկրներում տնտեսության գործունեության արդյունքում յուրաքանչյուր տարի շրջակա միջավայրին պատճառվում է ՀՆԱ-ի 8,0-10,0 տոկոսին համապատասխանող վնաս կամ մաշվածություն, այսինքն՝ փոխհատուցման գումարները զիջում են փաստացի պատճառվող վնասն ավելի քան 32-40 անգամ¹⁵: Նման պարագայում կարևորվում է բնօգտագործման և բնապահպանական վճարների տեսակարար կշռի ուսումնասիրումը երկրում արտադրվող ՀՆԱ-ի մեջ (գծապատկեր 5)¹⁶:



Գծապատկեր 5. Բնապահպանական և բնօգտագործման վճարների կշիռը ՀՆԱ-ում, %

¹⁵ ԶԴ/ «Որո+20» ազգային գնահատման զեկույց 2012 թ.:

¹⁶ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2012/ Ազգային հաշիվների համակարգ: Շրջակա միջավայրը և բնական պաշարները ԶԴ-ում 2005-2012 թթ. Բնօգտագործման և բնապահպանական վճարները 2001-2011 թթ.:

Ինչպես վկայում են գծապատկեր 5-ի ցուցանիշները, բնապահպանական և բնօգտագործման վճարների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում միջինում կազմում է 0.2-0.3%: Համեմատության համար նշենք, որ համապատասխան ցուցանիշը եվրոպական երկրներում կազմում է 2-3%: Դա նշանակում է, որ ՀՀ-ում բնապահպանական և բնօգտագործման վճարների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում շատ փոքր է, հարաբերակցությունը կայուն չէ, և դրսևորվում են նույն-իսկ անկման միտումներ, այն էլ՝ անընդհատ աճող ՀՆԱ պայմաններում: Կարելի է եզրակացնել, որ ստացված ՀՆԱ ցուցանիշը չի արտահայտում բնակչության իրական կենսամակարդակը, քանի որ դրանում հաշվի չեն առնվում բնությանը հասցված իրական էկոլոգատնտեսական և սոցիալական վնասները:


Բացի այդ, բնապահպանական ներդրումային/նպատակային ծրագրերի նախագծերի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցներ կուտակելու նպատակով ստեղծվել և գործում է բնապահպանական ֆոնդերի համապատասխան համակարգ, մասնավորապես՝

- 2005 թ. գործում է **շրջակա միջավայրի պահպանության դրամագլուխը**, որտեղ իրականացվում է համապատասխան երաշխիքային գումարների կուտակում ընդերքի շահագործման հետևանքով խախտված տարածքների ռեկուլտիվացիայի, հարթեցման, կանաչապատման, ծառատնկման և կառուցապատման աշխատանքների իրականացման համար: 01.05.2010 թվականի դրությամբ արդեն իսկ հավաքագրվել է ավելի քան 350.0 մլն դրամ:
- 2005թ. գործում է «**Բնապահպանական նպատակային ֆոնդ**» արտաբյուջետային հաշիվը: 2005-2010 թթ. Հայաստանի Հանրապետության իրավաբանական ու ֆիզիկական անձանց կողմից կամավոր մուծումների, նվիրատվությունների և հանգանակությունների տեսքով ֆոնդին է փոխանցվել ավելի քան 260.0 մլն դրամ:
- ՀՀ Կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 517-Ն որոշմամբ ստեղծվել է **Սևանա լճի վերականգնման, պահպանման և զարգացման հիմնադրամը**, որի նպատակն է աջակցել Սևանա լճի՝ որպես Հայաստանի Հանրապետության

քաղցրահամ ջրերի ռազմավարական շտեմարանի վերականգնմանը, վերարտադրությանը, պահպանմանը, բնականոն զարգացմանը և օգտագործմանը, ջրի մաքրության ապահովմանն անհրաժեշտ միջոցների ձեռքբերմանը:

3.2. Բնապահպանական և բնօգտագործման վճարները և վնասի հատուցումը ՀՀ մարզերի մակարդակով: Իրավիճակային վերլուծություն

Ընդհանուր պատկերացում կազմելով ՀՀ-ում բնօգտագործման և բնապահպանական վճարների ընդհանուր ցուցանիշների վերաբերյալ՝ նպատակահարմար է անդրադառնալ վերջիններիս շարժընթացի ուսումնասիրությանը ՀՀ մարզերի մակարդակով: Ստորև 2011 թվականին բնապահպանական օրենսդրությամբ հայտնաբերված խախտումների քանակն է մարզի 100 000 բնակչի հաշվով¹⁷: 2011 թվականին բնապահպանական իրավախախտումների առավել մեծ տեսակարար կշիռ 100 000 բնակչի հաշվով գրանցվել է Տավուշի (140.3), Վայոց ձորի (57.1), Լոռվա (43.2), Արագածոտնի (42.7) և Գեղարքունիքի (42.4) մարզերում, իսկ ամենաքիչը՝ Երևանում (7.2) և Արարատի (6.8) մարզում: Ընդ որում, հանրապետության միջինը (ներառյալ բնապահպանության պետական տեսչության տվյալները) կազմել է 36.6 միավոր: Ինչ վերաբերում է Երևանին և Արարատի մարզին, ապա ցուցանիշների մեծությունը որոշակի կասկած է առաջացնում, եթե հաշվի առնենք այդ մարզերի շրջակա միջավայրին բնորոշ էկոլոգիական որակը: Բնապահպանական իրավախախտումների հետևանքով առաջացող վնասների փոխհատուցման վերաբերյալ լիարժեք պատկերացում կազմելու համար՝ ներկայացնենք նաև վնասի հատուցման գումարի քանակական բաշխվածությունն ըստ բնապահպանական տարածքային տեսչությունների, 2004-2012 թթ. (գծապատկեր 6)¹⁸:



Գծապատկեր 6. **Վնասի հատուցման գումարի քանակական բաշխվածությունն ըստ բնապահպանական տեսչությունների, հազ. դրամ, 2004-2012 թթ.**¹⁹

Համաձայն գծապատկեր 6-ում բերված տվյալների՝ 2012 թվականին վնասի հատուցման առավել մեծ տեսակարար կշիռը պատկանել է **բնապահպանական պետական տեսչությանը** (51280.8 հազ. դրամ), **Տավուշի** (35805.3 հազ. դրամ), **Սյունիքի** (22314.6 հազ. դրամ) և **Լոռվա** (13853.3 հազ. դրամ) մարզերին: Վնասի փոխհատուցման շարժընթացից կարելի է եզրակացնել, որ վերջին տարիներին նկատվել է փոխհատուցվող վնասի գումարի քանակական անկում, որն, ըստ էության, պայմանավորված է եղել ըստ մարզերի հատուցման ենթակա վնասի մեծության կառուցվածքային փոփոխություններով: Եթե որոշ մարզերում նկատվել է փոխհատուցվող վնասի ցուցանիշի անկում (ինչը հանգեցրել է վնասի ընդհանուր մեծության նվազմանը), մյուսներում (2011-2012 թթ.՝ Գեղարքունիքի, Արմավիրի, Կոտայքի, Վայոց ձորի, Շիրակի և Սյունիքի մարզերում) պատկերը հակառակն է: Պետք է նշել նաև, որ տվյալ պարազայում շատ դժվար է պատկերացում կազմել ՀՀ յուրաքանչյուր մարզում վնասի հատուցման իրական պատկերի մասին, քանի որ ՀՀ մարզերի մակարդակով հավաքագրվող վնասի փոխհատուցման ցուցանիշների մի մասը արտացոլված է բնապահպանական պետական տեսչության տվյալներում: Այստեղ անհրաժեշտ է գործառնությունների հստակեցում:


¹⁷ Ատլաս Գայաստանի Գանրապետությունը մարզերով և Երևանով, 2012 թ./ Իրավական ոլորտ/ Բնապահպանական օրենսդրությամբ հայտնաբերված խախտումների քանակը մարզի 100 000 բնակչի հաշվով, 2011 թ.:

¹⁸ Ազգային վիճակագրական ծառայություն/ Բնապահպանական իրավախախտումներ/ Վնասի հատուցման գումարն ըստ արձանագրությունների 2004-2012 թվականներին:

¹⁹ Բնապահպանական պետական տեսչության 2010 թ. տվյալները արտացոլված են ԳՂ մարզերի և Երևան քաղաքի ցուցանիշներում:

Պետք է նշել նաև, որ 2006-2011 թթ. վիճակագրական տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ բնապահպանական և բնօգտագործման ընդհանուր վճարների 50%-ից ավելին պատկանել է Սյունիքի մարզին, մասնավորապես՝ 2011 թ. այստեղից հավաքագրված բնապահպանական և բնօգտագործման վճարները կազմել են ընդհանուրի 62.8%-ը (գծապատկեր 7)²⁰:

Նման աճը պայմանավորված է Սյունիքի մարզում գանձվող ընդերքօգտագործման վճարների քանակական ավելացմամբ, քանի որ միայն 2011 թվականին Սյունիքի մարզում դրանք (3444691 հազ. դրամ) կազմել են ընդհանուր բնօգտագործման վճարների 71.8%-ը (4792661.9 հազ. դրամ) և Սյունիքի մարզի մակարդակով՝ բնօգտագործման վճարների 99.1 %-ը (3474425.2 հազ. դրամ)²¹:



Գծապատկեր 7. *Սյունիքի մարզի բնապահպանական և բնօգտագործման վճարների համեմատությունը ընդհանուր բնապահպանական և բնօգտագործման վճարների հետ*


Այսպիսով՝ թե՛ բնապահպանական իրավախախտումների և թե՛ բնօգտագործման ու բնապահպանական վճարների վիճակագրության ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վրա մարդածին ծանրաբեռնվածության առավել բարձր աստիճանով բնութագրվում են Սյունիքի, Լոռվա, Գեղարքունիքի և Տավուշի (վնասի հատուցման գումարի մեծության գծով) մարզերը:

²⁰ Շրջակա միջավայրը և բնական պաշարները 33-ում 2006-2012 թթ.: Բնօգտագործման և բնապահպանական վճարները 2006-2011 թթ.:

²¹ Շրջակա միջավայրը և բնական պաշարները 33-ում 2006-2012 թթ.: Բնօգտագործման և բնապահպանական վճարները 2006-2011 թթ.:

3.3. Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության կատարելագործման և միասնական մեթոդական մոտեցումների մշակման հիմնավորում


Վերլուծությունները վկայում են, որ շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերը բավականին փոքր տեսակարար կշիռ ունեն պետությունից ընդհանուր ծախսային հատվածում և նույնիսկ դրսևորում են նվազման միտումներ այն պարագայում, երբ տարեցտարի նկատվում է պետությունից ընդհանուր ծախսերի աճ: Մասնավորապես՝ շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված հատկացումների տեսակարար կշիռը պետությունից ընդհանուր ծախսերի նկատմամբ միջինում կազմում է 0.61%, ինչը զգալիորեն ցածր ցուցանիշ է և հնարավորություն չի տալիս ամբողջությամբ փոխհատուցելու շրջակա միջավայրին հասցվող վնասը (գծապատկեր 8)²²: Ցավոք, այդ երևույթը «քրոնիկ» բնույթի է, քանի որ բնապահպանական ծախսերը երբևէ չեն մոտեցել 1%-ի սահմանին:



Գծապատկեր 8. *Շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերի տեսակարար կշիռը պետությունից ընդհանուր ծախսերում, %*

²² «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» օրենք, 2008-2013 թթ. / Շրջակա միջավայրի պաշտպանության ծախսեր 2008-2013 թթ.:

Գծապատկեր 9-ում ներկայացված է պետբյուջեից շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղված միջոցների շարժընթացն ըստ բնապահպանական ուղղությունների²³:



Գծապատկեր 9. Պետբյուջեից շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղված միջոցներն ըստ բնապահպանական ուղղությունների, 2008-2013 թթ., հազ. դրամ

Գծապատկերից դժվար չէ նկատել, որ շրջակա միջավայրի պաշտպանությանը նպատակաուղղված հատկացումների մեջ առավել մեծ տեսակարար կշիռը ունեն կենսաբազմազանության և բնության պաշտպանության ծախսերը: Վերջին տարում նկատվել է նաև աղբահանման գծով հատկացումների ավելացում: Հաշվի առնելով մթնոլորտի գերնորմատիվային աղտոտման հետ կապված հիմնախնդիրները՝ նպատակահարմար է մեծացնել նաև օդի աղտոտման դեմ պայքարի հատկացումների տեսակարար կշիռը, որը ներկայումս կազմում է շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերի միայն 2.3%-ը (2013 թ. դրությամբ): Պետբյուջեի՝ շրջակա միջավայրի աղտոտման դեմ պայքարի դասում, օդի աղտոտման դեմ պայքարից բացի, անհրաժեշտ է ներառել նաև ջրերի և հողերի աղտոտման դեմ ուղղված միջոցառումների ցանկը և ապահովել դրանց ֆինանսավորումը:

²³ «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» օրենք, 2008-2013 թթ. Շրջակա միջավայրի պաշտպանության ծախսերն ըստ բնապահպանական ուղղությունների, 2008-2013 թթ.:

Էկոլոգատնտեսական վնասների փոխհատուցման լայն հնարավորություններ է ստեղծում նաև «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի կիրարկումը: Համաձայն «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի՝ յուրաքանչյուր տարի օրենքում նշված ընկերությունների բնապահպանական վճարներից մասհանումներ են կատարվում, և դրանք առանձին տողով արտացոլվում են այն համայնքների բյուջեների վարչական մասում, որոնց տարածքում նշված ընկերությունների գործունեությունը թողնում է վնասակար ազդեցություն²⁴:

Այսպիսով՝ բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգի ձևավորման ու զարգացման միջազգային և ազգային փորձի ուսումնասիրումը, վճարների դրույքաչափերի որոշման մեթոդաբանության վերլուծությունը և գնահատումը հնարավորություն ստեղծեցին հայտնաբերելու այն առանձնահատկություններն ու հրատապ լուծում պահանջող խնդիրները, որոնք բնորոշ են բնապահպանական և բնօգտագործման վճարների ազգային համակարգին: Դրանցից կարելի է նշել, մասնավորապես, հետևյալները.

1. **Վճարների ֆիսկալ և կարգավորիչ մեխանիզմների համարժեքության խախտման հիմնախնդիր:** Բնապահպանական և բնօգտագործման վճարները ՀՀ-ում ծառայում են հիմնականում որպես պետական բյուջեի համալրման ֆինանսական ռեսուրսների գեներացիայի (դրամական հոսքերի/մուտքերի ավելացման) **ֆիսկալ մեխանիզմ:** Վճարների համակարգի գործունեության արդյունավետությունը, հատկապես՝ դրամական միջոցների բնապահպանական նպատակային օգտագործման տեսանկյունից, **դեռևս** գտնվում է ոչ բավարար մակարդակի վրա: Արդյունքում՝ անարդյունավետ է գործում նաև շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունների նվազեցման և բնական ռեսուրսների բնական օգտագործման կարգավորիչ մեխանիզմը:

2. **Բնապահպանական վճարների համակարգի բարեփոխումների և մեթոդաբանության գիտական հիմնավորվածու-**

²⁴ «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք, 2001 թ.:

թյան ցածր մակարդակի հիմնախնդիր: Բնապահպանական վճար ների դրույքաչափերի որոշման և էկոլոգիական որակի ապահովման մեթոդաբանությունը կողմնորոշված է հիմնականում դրույքաչափերի պարբերաբար վերանայմանը և բարձրացմանը, աղտոտող և հսկվող նյութերի ցանկի՝ հաճախ գիտականորեն չհիմնավորված կրճատմանը (օդի, ջրի և թափոնների ոլորտներում), ինչպես նաև գնաճին համապատասխան վճարների դրույքաչափերի շտկման անտեսմանը: Ստացվում է այնպես, որ համակարգում գործում և արդարացված է համարվում՝ «աղտոտի՛ր, բայց վճարի՛ր» սկզբունքը: Այդ մասին է վկայում նաև շրջակա միջավայրի էկոլոգիական/կենսաապահովման որակի անկման կայուն միտումը ՀՀ-ում:

3. Բնօգտագործման վճարների համակարգում դրույքաչափերի որոշման մեթոդական մոտեցումների անկադարության հիմնախնդիր: Այս ոլորտում արձանագրվում է բյուջետային մուտքերի անընդհատ աճ՝ պայմանավորված լեռնահանքային արդյունաբերության և շինարարության ոլորտների աստիճանական զարգացմամբ, ինչպես նաև ազնիվ և գունավոր մետաղների, ոչ մետաղական օգտակար հանածոների արդյունահանման ծավալների ավելացմամբ: Միաժամանակ, առանձին օգտակար հանածոների (հանքային ջուր, աղ, ոչ մետաղական օգտակար հանածոներ) գծով վճարի դրույքաչափերի բարձրացումը բացասական էկոլոգիական հետևանքների նվազեցման մասով կազմում է դրական միտումների չնչին տոկոսը, քանի որ ցածր մակարդակի վրա է համապատասխան «բնապահպանական արձագանքը»:

4. Բնօգտագործման վճարների դրույքաչափերի որոշման մեթոդաբանության և հարկային դրույքաչափերի սահմանման մեթոդաբանության անհամարեղելիության հիմնախնդիր: Առկա են խոր հակասություններ շահույթի աճի և հարկային բեռի միջև, ինչի պատճառով հանքարդյունաբերության բնագավառում գրեթե չեն փոխհատուցվում էկոլոգիական և սոցիալական վնասները՝ կապված շրջակա միջավայրի կենսաապահովող որակի անկման հետ: Դա նշանակում է՝ լեռնարդյունաբերության ոլորտում գործող շահութահարկի պրոգրեսիվ դրույքաչափը վերանայման կարիք ունի: Հակառակ դեպքում, համարժեք ձևով չի գործի ուղղակի մեխանիզմը:

5. Բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգում վնասների անհամարժեքության գործոնի վերացման հիմնախնդիր: Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդաբանության մեջ դեռևս հաստատուն գործառույթային նշանակություն չի ստացել էկոլոգատնտեսական վնասների գնահատման մեթոդաբանությունը: Հաշվարկներում հաճախ օգտագործվում են հնացած նորմատիվային գործակիցներ, ինչի պատճառով համոզիչ չեն «Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին» ՀՀ օրենքում (ընդունվել է 2005 թ. մայիսի 3-ին) սահմանված վնասի հատուցման սակագները: Անհասկանալի են դրանց որոշման մեթոդական մոտեցումները: Սակագների նման որոշումն «աղավաղում» է բնապահպանական և բնօգտագործման վճարների իրական մեծությունը, քանի որ այն հիմնվում է վնասների ոչ ճշգրիտ հաշվարկի վրա: Վճարները պետք է մոտ լինեն վնասների իրական արժեքին, որպեսզի ապահովված լինեն կարգավորիչ գործառույթները:

6. Ոչ վտանգավոր թափոնների տեղադրման դիմաց վճարների դրույքաչափերի բարձրացման հիմնախնդիր: Հասունացել է «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի (ա) կետով սահմանված՝ ոչ վտանգավոր թափոնների հաստատագրված վճարների դրույքաչափերի վերանայման անհամաձայնությունը, հատկապես՝

- ✓ լեռնարդյունահանող իրավաբանական անձանց կողմից տեղադրված ոչ վտանգավոր թափոնների համար,
- ✓ հողածածկույթի քանդման և շինարարության հետևանքով առաջացած ոչ վտանգավոր թափոնների համար:

Ընդ որում, այստեղ չափազանց կարևորվում են թափոնների վտանգավորության դասի որոշման մեթոդական մոտեցումների գրագետ օգտագործումը, նորմատիվային ցուցանիշների ճշգրիտ կիրառումը, վնասների գնահատումը և դրանց նկատմամբ հսկողության ուժեղացումը: Հեռանկարային է տվյալ բնագավառում թափոնների տեղադրման քվոտավորման և իրավունքի վաճառման սկզբունքի ներդրման փորձնական կիրառումը՝ հաշվի առնելով տարածքի էկոլոգատնտեսական առանձնահատկությունները:

7. Էկոլոգիապես վրանգավոր արտադրանքի վճարների կարգավորման հիմնախնդիր: Հրատապ է էկոլոգիապես վտանգավոր արտադրանքի համար սահմանված վճարների վերանայումը՝ նախապես հիմնավորելով դրանց դասակարգման գիտական լիարժեքությունը, վտանգավորության աստիճանը և օգտագործման հնարավոր վնասների հատուցման անհրաժեշտությունը: Միայն այս մոտեցմամբ դրանց կարգավորիչ/խրախուսող նշանակությունը կուժեղանա:

8. Էկոլոգիական ռիսկերի ապահովագրման համակարգի ներդրման և զարգացման անհրաժեշտության հիմնախնդիր: Անհրաժեշտ է ներդնել տնտեսական և գործունեության այլ տեսակների իրականացման, մասնավորապես՝ էկոլոգիապես վտանգավոր արտադրանքի թողարկման, ներմուծման և տրանզիտային փոխադրման հետ կապված էկոլոգիական ռիսկերի ապահովագրման համակարգ: Դրանով կավելանա բյուջետային մուտքերի համալրման և էկոլոգիական վտանգները կանխարգելող ևս մեկ ժամանակակից լծակ: Բնապահպանական և բնօգտագործման վճարների օգտագործման արդյունավետության բարձրացմանը միտված առաջնահերթ խնդիրներից է դրանց հասցեական օգտագործման էկոլոգիապես գրագետ հիմնավորումը, ինչի համար «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում կատարված լրացումով 2011 թվականից սկսեց գործել բյուջետային մուտքերի կառուցմանը նպաստող ևս մեկ տնտեսական լծակ՝ ռոյալթին:

9. Բնապահպանական և բնօգտագործման վճարների նպատակային օգտագործման հիմնախնդիր: Կարևոր հանգամանքներից է նաև բնապահպանական սուբվենցիաների ստացման իրավունքից օգտվելու հնարավորություն ունեցող համայնքների ցանկի ընդլայնումը (ներկայումս դրանց թիվը 26 է): Այստեղ չափազանց էական է «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի կիրարկման նկատմամբ մոնիթորինգային ուսումնասիրությունների պարտադիր իրականացումը՝ նպատակ ունենալով պահպանելու տրանսպարենտության սկզբունքը: Նույն սկզբունքի կիրառումն անհրաժեշտ է նաև ՀՀ-ում գործող՝ Անտառների վերականգնման և զարգացման հիմնադրամի (2004 թ.), Շրջակա միջա-

վայրի պահպանության դրամագլխի (2005 թ.), Բնապահպանական նպատակային ֆոնդի (2005 թ.), Սևանա լճի վերականգնման, պահպանման և զարգացման հիմնադրամի (2011 թ.) նկատմամբ: Այս տեսանկյունից նպատակահարմար է ՀՀ-ում ներդնել և զարգացնել էկոլոգիական աուդիտի ժամանակակից մեթոդաբանություն:

Այսպիսով՝ Հայաստանում գործող բնապահպանական և բնօգտագործման վճարները երկրի շրջակա միջավայրի պահպանության և ռացիոնալ բնօգտագործման, կառավարման և հսկողության միասնական համակարգի, տնտեսական մեխանիզմի առավել ազդեցիկ գործոններից են:

Բնապահպանական և բնօգտագործման վճարները, ինչպես հայտնի է, կոչված են շրջակա բնական միջավայրի կենսաապահովող որակի, այդ միջավայրի բնառեսուրսային ներուժի պահպանմանը և ողջամիտ օգտագործմանը:

Վճարների կարևորագույն գործառույթներից է միջոցների նպատակաուղղված/հասցեական օգտագործումը բնական՝ էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների կայունության պահպանման և էկոլոգիական հավասարակշռության վերականգնման, բնառեսուրսային ներուժի վաղաժամ հյուծման կանխման, պատճառված վնասների և ռիսկերի հատուցման նպատակներով: Այդ գործողությունների ամբողջությունը կողմնորոշված է հասարակության բարեկեցության ամրապնդմանը և զարգացման էկոլոգիական անվտանգության ապահովմանը:

Վճարների համակարգի ներքին կառուցվածքը և գործիքավորումը (տնտեսական գործիքների ամբողջություն), որպես կանոն, ենթարկվում է փոփոխությունների՝ կապված երկրում իրականացվող էկոլոգիական քաղաքականության, սոցիալ-տնտեսական զարգացման միտումների և էկոլոգիատնտեսական բարեփոխումների հետ: Դրույթաչափերը որոշվում են՝ հիմնվելով գործող օրենսդրական և իրավական ակտերի, ՀՀ Կառավարության որոշումների և կարգերի, նորմատիվամեթոդական և այլ կարգավորիչ փաստաթղթերի վրա: Ելնելով դրանից՝ ենթադրվում է, որ միասնական մեթոդաբանությունը պետք է ընդգրկի բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման մեթոդական մոտեցումների ամ-

բողջություն, որի գրագետ և արհեստավարժ օգտագործումից են կախված բյուջետային մուտքերի կայունությունը և նպատակային օգտագործման արդյունավետությունը:

Միասնական մեթոդաբանությունը հիմնված է բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքաչափերի որոշման մեթոդական մոտեցումների վրա, որոնք ընդգրկված են «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենքում (2006 թ.):

Հաշվի առնելով դրույքաչափերի որոշման հայտնաբերված բացթողումները՝ առաջարկվում է սույն օրենքի գլուխ 1-ի, հոդված 2-ի, բ) ենթակետում $\Gamma_{\text{օր}}$ -ի հաշվարկում օգտագործել նոր բանաձև.

$$\Gamma_{\text{օր}}' = k_{\text{հնդ}} * \Gamma_{\text{օր}},$$

որտեղ՝

$$K_{\text{հնդ}} = 1 + U\theta_{\text{հն}} / U\theta_{\text{հբ}},$$

$K_{\text{հնդ}}$ -ը վճարի դրույքաչափի ինդեքսավորման գործակիցն է,

$U\theta_{\text{հն}}$ և $U\theta_{\text{հբ}}$ – ն սահմանային թույլատրելի խտությունն է մարդու և բույսերի համար՝ համապատասխանաբար:

Նույն օրենքի 1-ին գլխի 2-րդ հոդվածի ա) կետում ամրակայված աղբյուրներից օդային ավազան փոշու արտանետման յուրաքանչյուր տոննայի դիմաց վճարը 1800 դրամի փոխարեն սահմանել 2500 դրամ:

Առաջարկվում է նաև նույն օրենքի 1-ին գլխի 2-րդ հոդվածի ա) կետում վճարի հաշվարկման բանաձևում վերանայել ինչպես վնասակար նյութերի և միացությունների ցանկը, այնպես էլ դրույքաչափերը՝ հատկապես կախված նյութերի, դետերգենտների, ծանր մետաղների, աղերի, ցիանի և ցիանի միացությունների մասով: Անընդունելի է, մասնավորապես, նույն դրույքաչափերի սահմանումը վնասակար տարբեր ազդեցությամբ միացությունների համար: Նման մոտեցմամբ անհրաժեշտ է սահմանել նաև ջրային ավազանի աղտոտման նյութերի դրույքաչափերը: Կարևոր է աղտոտիչների ներքին կառուցվածքի վերանայումը նոր դրույքաչափերով: Հրատապ է ոչ վտանգավոր թափոնների տեղադրման դրույքաչափերի վերանայումը՝ օգտագործելով ձեռնարկությունների էկոլոգիականության գնահատման ցուցանիշները, հաշվի առնելով ռիսկի և վնասների գործոնը:

Եզրակացություն

1. Բնական ռեսուրսների հարածուն շահագործումը և շրջակա միջավայրի կառավարման թերությունները ՀՀ-ում շարունակում են բացասական ազդեցություն գործել շրջակա միջավայրի որակի, բնակչության առողջության և կենսապայմանների վրա՝ լրջորեն վտանգելով նաև տնտեսության երկարաժամկետ կենսունակությունը: Վերջինս վկայում է, որ ՀՀ տնտեսությունը շարունակում է մնալ ինդուստրիալ բնույթի, բնութագրվում է շրջակա միջավայրի վրա մարդածին ծանրաբեռնվածության բարձր ցուցանիշներով և բնական ռեսուրսների գերշահագործմամբ:

2. Ուսումնասիրություններից պարզվեց, որ բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգը ՀՀ-ում ունի մի շարք ընդհանրություններ միջազգային համակարգի հետ: Տարբեր է վճարների կիրառման հետադարձ էֆեկտը՝ պայմանավորված դրանց հասցեական օգտագործմամբ և օգտագործման տնտեսական արդյունավետությամբ: Ի տարբերություն եվրոպական պրակտիկայի, ՀՀ-ում դեռևս անհրաժեշտ գործնական կիրառում չեն ստացել «գրավ-վերադարձային» համակարգը, էկոլոգիական փոխառությունների ներդրումը և ռիսկերի ապահովագրումը:

3. ՀՀ-ն շարունակում է զարգանալ տեխնոժին մոդելի շրջանակներում, որը շրջակա միջավայրի որակի պահպանման և բնառեսուրսային ներուժի կայունության ապահովման տեսանկյունից ունի զգալի էկոլոգատնտեսական բացթողումներ, որոնք առավել նկատելի են վնասների հատուցման, հարկային բեռի և վճարների նպատակային օգտագործման մասով: Նման պայմաններում ավելի ղժվար է բարձրացնել օգտագործվող վճարների դրական էկոլոգիական արդյունքը:

4. Հետազոտությունների արդյունքները վկայում են, որ ինչպես միջազգային, այնպես էլ ազգային պրակտիկայում դեռևս պահպանվում է վճարների դրույքաչափերի և ներքին կառուցվածքի պարբերաբար վերանայման ֆե-

նոմենը, ինչը հաճախ երկրի տնտեսական անկայունության կամ գլոբալ ֆինանսատնտեսական ճգնաժամի հետևանք է: Եթե որոշ եվրոպական երկրներում հիմնախնդրի լուծումը «մեղմվում է», օրինակ՝ մեթոդաբանության կատարելագործման, վճարների դրույքաչափերի ինդեքսավորման և տնտեսական նոր գործիքների ներդրման միջոցով, ապա ՀՀ-ում հարցի լուծումը, որպես կանոն, փորձում են գտնել հիմնականում դրույքաչափերի հիման վրա:

5. Ենթադրվում է, որ բնապահպանական և բնօգտագործման վճարների դրույքաչափերի բարձրացման պրակտիկան դեռ կպահպանի իր գործունակությունը, քանի որ մշակված չեն վճարների դրույքաչափերի շտկման գործակիցներ և օրենսդրորեն կարգավորված չէ կապը վճարների դրույքաչափերի որոշման և վնասների հատուցման միջև: Մասնավորապես՝ բուսական և կենդանական աշխարհին պատճառված վնասների հատուցման մեծությունը կրում է ավելի շատ պայմանական բնույթ, քան ազդեցիկ՝ հատկապես վճարներում վնասի մեծության ներառման մասով: Վնասների հատուցումը ունի հիմնականում տուգանքային բնույթ՝ կտրված վճարների իրական մեծությունից: Նման իրավիճակը բնորոշ է հատկապես մարզերին (Սյունիք, Լոռի, Արարատ, Գեղարքունիք, Տավուշ), որտեղ բնապահպանական և բնօգտագործման վճարների օգտագործման և հետադարձ դրական էկոլոգիական արդյունքի ապահովման միջև առկա է խոր հակասություն:

6. ՀՀ-ում շրջակա միջավայրին և բնական ռեսուրսներին հասցված վնասի մեծության մասին կարելի է դատել միայն բնապահպանական և բնօգտագործման վճարների ցուցանիշների, ինչպես նաև բնապահպանական իրավախախտումների հետևանքով հայտնաբերված վնասի ցուցանիշի մեծությունների հիման վրա: Ինչ վերաբերում է բնապահպանական և բնօգտագործման վճարների շարժընթացի վերլուծության արդյունքներին, ապա, թեև վերոհիշյալ ցուցանիշները դրսևորում են աճի միտումներ, դա դեռևս չի նշանակում, որ տնտեսական համակարգը

գործում է աղյուսավետ: Բնապահպանական և բնօգտագործման վճարներն աճում են շրջակա միջավայրի որակի ցուցանիշների անկմանը զուգընթաց:

7. ՀՀ-ում շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ պետք է կատարվող հատկացումները բավականին փոքր տեսակարար կշիռ ունեն պետք է մուտքագրվող բնապահպանական և բնօգտագործման վճարների ընդհանուր ծավալում, որի հետևանքով հաճախ առաջ է գալիս բնապահպանական և բնօգտագործման վճարների ոչ նպատակային օգտագործման խնդիրը:

8. Բնապահպանական և բնօգտագործման վճարների որոշման ազգային և միջազգային փորձի համեմատական վերլուծությունը և գնահատումը ցույց տվեցին, որ ներկայում միասնական մեթոդաբանության ստեղծման համար նպատակահարմար է ընտրել վճարների ինդեքսավորումը, ձեռնարկությունների էկոլոգիականության գնահատումը ռիսկերի և վնասների հատուցման համաչափության միջոցով, ինչպես նաև էկոլոգիական ռիսկերի ապահովագրման հիման վրա: Դրա համար առանձնացված են գիտականորեն հիմնավորված միասնական մեթոդաբանության ստեղծման 9 ուղղություններ:

Այսպիսով՝ ՀՀ-ում էկոլոգատնտեսական վնասների գնահատման և փոխհատուցման ոլորտում գործող նորմատիվային փաստաթղթերի և առկա վիճակագրության վերլուծությունը վկայում է, որ էկոլոգիական վնասի գնահատման և փոխհատուցման գոյություն ունեցող համակարգն ունի մի շարք բացթողումներ մեթոդական, կազմակերպական և իրավական ապահովման տեսանկյունից: Հետևապես՝ առաջնային նշանակություն է ձեռք բերում հետևյալ բարեփոխումների իրականացումը.

1. Որպեսզի բնապահպանական և բնօգտագործման վճարների միջոցով հնարավոր լինի ապահովել շրջակա միջավայրին և բնական ռեսուրսներին հասցված վնասի լիարժեք փոխհատուցում, անհրաժեշտ է հաշվարկման հիմքում դնել շրջակա միջավայրի աղտոտումից և դրա հետևանքով առաջացող լրիվ տնտեսական վնասի, այլ ոչ թե միայն բնապահպանական միջոցառումների իրականացման համար պահանջվող ծախսերի մեծությունը:

2. Վերանայել բնապահպանական և բնօգտագործման վճարների գործող դրույքաչափերը, ընդլայնել բնապահպանական ֆոնդերի ցանկը, ապահովել միջոցների հասցեական օգտագործումը և գործընթացի թափանցիկությունը: Խստացնել բնապահպանական վերահսկողության պահանջները, ընդլայնել ստուգվող օբյեկտների քանակը, ինչպես նաև կարգավորել հայտնաբերված բնապահպանական իրավախախտումների՝ սահմանված ժամկետում վերացման ապահովման գործընթաց:

3. Կարևորելով կազմակերպությունների՝ որպես լոկալ մակարդակի հիմնական օղակի դերը էկոլոգատնտեսական վնասների գնահատման, կանխարգելման և փոխհատուցման գործընթացների կատարելագործման ճանապարհին՝ առաջնային է համարվում ՀՀ-ում «Բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ ինքնահսկում իրականացնելու մասին» օրենքի նախագծի ընդունումը: Էկոլոգատնտեսական վնասի գնահատման մեթոդաբանության կատարելագործման նպատակով շեշտադրվում է նաև «Տնտեսական գործունեության հետևանքով շրջակա միջավայրի վրա առաջացող բացասական ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության որոշման նախագծի ընդունումը:

Գրականության ցանկ

1. «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք, 2005 թ.:
2. «Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին» ՀՀ օրենք, 2006 թ.:
3. «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենք, 1998 թ.:
4. «Բնօգտագործման վճարի դրույքաչափերի մասին» ՀՀ Կառավարության N 864 որոշում, 1998 թ.:
5. «Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին» օրենք, 2008-2013 թթ.:
6. «Ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության N 1110-Ն որոշում, 2003 թ.:
7. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենք, 2001 թ.:
8. Ազգային վիճակագրական ծառայություն, «Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2000-2011 թթ.», Բնապահպանական իրավախախտումներ՝ 2000-2012 թթ., Բնապահպանական և բնօգտագործման վճարներ՝ 2000-2011 թթ.:
9. Հայաստանի վիճակագրական տարեգիրք /Ազգային հաշիվների համակարգ/ 2012 թ.:
10. ՀՀ բնապահպանության նախարարության 2007-2011 թթ. նախարարական զեկույց, Երևան 2012 թ.:
11. «Ռիո+20» ազգային գնահատման զեկույց, Երևան 2012 թ.
12. А.П. Хаустов, И.М.Редина и др. “Природопользование, охрана окружающей среды и экономика”, М., 2006.
13. Global Environment Outlook 4
[/http://www.unep.org/geo/geo4.asp/](http://www.unep.org/geo/geo4.asp/)
14. Global Footprint Network/ Advancing the Science of Sustainability/Ecological footprint/Armenia,
<http://www.footprintnetwork.org/en/index.php/GFN/page/Armenia>
15. United Nations Development Assistance Framework 2010-2015.

АННОТАЦИЯ

С.А. Геворкян, Р.А. Петросян, А.П. Геворкян

Проблемы совершенствования методологии определения природоохранных и природопользовательских платежей в РА

Исследован международный опыт формирования системы природоохранных и природопользовательских платежей. Проанализирована и оценена внутренняя структура системы платежей. Выделены наиболее перспективные экономические инструменты.

Исследован национальный опыт формирования системы природоохранных и природопользовательских платежей. Выделены типы природоохранных и природопользовательских платежей, проанализирована и оценена внутренняя структура системы и экономические инструменты. Проанализированы показатели определения ставок природоохранных и природопользовательских платежей, обоснована необходимость их пересмотра.

SUMMARY

Gevorgyan S.A., Petrosyan R.A., Gevorgyan A.P.

The Problems of Development of Determination Methodology the Environmental Fees and Natural Resources Payments

International experience of forming a system of payments for environmental and natural resource management is analyzed. The internal structure of the payment system is analyzed and assessed. The most perspective economic instruments are subjected.

Domestic experience of forming a system of payments for environmental and natural resource management is analyzed. The types of payments for environmental and natural resources management are identified, the internal structure of the system of payments and economic instruments-analyzed and evaluated. The establishment of the rate of payments' parameters on the ecology and natural resources are analyzed, and thenecessity to be revised.

**ՀՊՏՀ ՆԵՐՀԱՄԱՍԱՐԱՆԱԿԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐՔԻՑ**

Ծրագրի գիտական ղեկավար՝
տ.գ.դ., պրոֆեսոր Ս.Ա. Գևորգյան

Կատարողներ՝
քիմ.գ.թ., դոցենտ Ռ.Ա. Պետրոսյան
տ.գ.թ., դոցենտ Ա.Պ. Գևորգյան

**Բնապահպանական և բնօգտագործման
վճարների որոշման մեթոդաբանության
կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում**

Խմբագիր՝ Ս. Ալավերդյան
Էջադրումը և սրբագրումը՝ Ռ. Պետրոսյանի
Ձևավորումը՝ Ն. Խչեյանի

Չափս՝ 60x84^{1/16}:
3,7 տպ. մամուլ
Տպաքանակ՝ 100:

ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» հրատարակչություն
Երևան, Նալբանդյան 128
010 59 34 37